30 ՄԱՐՏ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 55(4674)

Azg Ազգ

ISSN: 1829-1651

Կասեցվել է զենքի մեծ խմբաքանակի առաքումը Կովկաս

Ֆրանկֆուրտի մախային ծառայության աշխատակիցները կասեցրել են զենքի մեծ խմբաքանակի առաքումը Կովկաս, տեղեկացնում է ShortNews-ը:

Ենթադրվում է, թե զենքը գնվել է Նիդեռլանդներում՝ այնուհետեւ մախանենգ ճանապարհով Կովկաս փոխադրելու նպատակով: Հավանական է, որ հիշյալ ակցիայի հեղինակը Վիսբադենում վերջերս բնակություն հաստատած 40-ամյա մի թուրք է, որը, գերմանական ոստիկանության տվյալներով, գաղտնի ծառայությունների սպա է եղել նախկինում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Ահմեդ Դավութօղլուի համար հայկական սփյուռքը համարվում է Թուրքիայի «դիապորան»...

«**Ազգի**» նախորդ համարում, որտեղ ներկայացրել էինք նախկին սամբուլահայ Տարոն Աջեմօղլուին Փարիզում Թուրքիայի դեսպան նշանակելու վերաբերյալ արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի հայտարարությունը, խոսացել էինք ներկայացնել բրիտանական Wilton Park վերլուծական կենտրոնի Սամբուլում կազմակերպած «Ժամանակակից աշխարհում Թուրքիայի նախաձեռնողական քաղաքականությունը» վերտառությամբ այդ համաժողովում Դավութօղլուի պատասխանը «**Ազգի**» գլխավոր խմբագրի հարցմանը, ինչն անում ենք այժմ: Մինչ այդ, սակայն, ասենք, որ երեկ հայկական եւ ադրբեջանական բազմաթիվ կայքէջեր անդրադարձել էին «**Ազգի**» այդ տեղեկատվությանը, ոմանք, ինչպես իրենց սովորությունն է, առանց նշելու աղբյուրը, իսկ ուրիշներն անգամ խեղաթյուրել լուրը, գրելով, օրինակ, որ Թուրքիան պատրաստվում է հայազգի դեսպան նշանակել Ֆրանսիայում: Մինչդեռ մենք գրել էինք՝ **Փարիզո՛ւմ**: Ըստ ավելի ուշ մեր ստացած տեղեկության, Աջեմօղլուն Փարիզում կլինի Թուրքիայի դեսպանը Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (OECD) մոտ, ինչը նույնպես խիստ կարեւոր պաշտոն է:

Ինչ վերաբերում է Թուրքիա-Հայաստան արձանագրությունների ճակատագրի վերաբերյալ մեր խմբագրի հարցին ի պատասխան Դավութօղլուի խոսքին, որը հնչեց նրա՝ շուրջ 30 րոպե տեւած զեկուցման ավարտին, ստորեւ ներկայացնում ենք այն ոչ բառացի, որովհետեւ համաժողովի ընթացքը, ըստ նախապես եղած պայմանավորվածության, չէր ձայնագրվում: Հետեւաբար, բավարարվում ենք տեղում արված նշումներով, 1 հարց եւ 1 պատասխան ձեւաչափով, չերաշխավորելով պատասխանի բացարձակ ճշգրտությունը:

Տես էջ 8

ԿՈՂՈՊՈՒՏԻ ԱՐՏԱՈՅ ԴԵՊՔ

Աղտակ ոստիկանության երեսին

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ արտառոց դեպք է գրանցվել Երեւանում: Ոստիկանության կապիտանը փորձել է բանկ կտրել: Ժամը 12:30-ի սահմաններում ոստիկանության Երեւան քաղաքի վարչություն ահազանգ է ստացվել, որ զինված անձը մտել է «Կոնվերս բանկի» Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտայի 12/10 հասցեում գտնվող մասնաճյուղ եւ փորձել է կողոպտել՝ բանկի ղին գտնելու եւ բանկ կտրելը կանխելու փոխարեն իրենք են բանկ կտրում: Այդ որքա՞ն պետք է բարերը փչացած լինեն, որ ոստիկանության կապիտանը օրենքի պաշտպան լինելու փոխարեն կողոպտիչ լինի:

Չէինք ուզենա թանձրացնել գույները, քանի որ մի քանի նորմալ ոստիկանի անձամբ ճանաչում ենք, սակայն տեղի ունեցածն ամենեւին էլ շարքային դեպք համարել չի կարելի:

Ներսում արձակելով երկու-երեք կրակոց: Հանցագործը վնասազերծվել է ոստիկանության աշխատակիցների կողմից՝ մարմնական վնասվածք ստանալով, նրան տեղափոխել են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն: Պարզվել է, որ նա ոստիկանության Նոր Նորքի բաժնին կից պահպանության բաժնի պետ, ոստիկանության կապիտան Արթուր Հակոբյանն է:

Այս լուրը սառը ցնցուղի պես մի բան է մեր հասարակության համար, քանի որ ոստիկանության վարկը վերջին տարիներին առանձնապես մի նորմալ նիշի վրա չէր, ու ոստիկանության հանդեպ վստահության բարձրացմամբ վերջերս մտահոգ էին երկրի նախագահը, ոստիկանության մասին օրենսդրության բարեփոխմանը սատարող եվրոկառույցները: Կարծես այնքան վաս պաշտոն չպիտի ունենար տվյալ Արթուր Հակոբյանը, մեզանից՝ սովորական մահկանացուներիցս ավելի բարձր աշխատավարձ ստանալիս պիտի լիներ, բացի դրանից, այդ ի՞նչ կադրեր են աշխատում ոստիկանությունում, որ բանկ կտրելիս գտնվեն մի քանի անգամ ներկայացնելով Ազատության պողոտայի բնակչուհի, թոշակառու Վեներա Անտոնյանի բողոքն «Ազգ» օրաթերթին, որով նա բողոքում էր ոստիկաններից, թե չեն հայտնաբերում իր տունը կողոպտող հարեւանին, ու թերահավաս էինք մի փոքր այնուամենայնիվ՝ գուցե թոշակառուն չափազանցում էր, ծայրահեղ ու չարդարացված ասելիք մատուցելում, ժողովրդական ասելիքով ընդհանրացնում, թե գողն իրենք են ախր, քանի որ գողին պարտակողին, ըստ նրա, էլ ի՞նչ անուն տաս: Մտածում էինք՝ տարիքով կին է, դե լավ, մի փիչ ծայրահեղացնում է: Բայց եւ՝ ցավում էինք մտայնության համար, որ նրա ասածը մեծ հաշվով նշանակում է վստահության բացակայություն: Այո՛, մեր կյանքում պատահած զանազան առնչությունները ոստիկանությանը շատ անգամ չեն արդարացրել այն համարումը, որ ոստիկանությունը պիտի ունենար Հայաստանում, շատ անգամ կասկածի տակ են դրել արդարության եւ կարգի պահպանի կերպարը:

Տես էջ 2

Միշելին Քալմի-Ռեյը պաշտոնական այցով Երեւանում

Շվեյցարիայի Դաշնային նախագահ Միշելին Քալմի-Ռեյը մարտի 31-ապրիլի 1-ը պաշտոնական այցով կլինի Հայաստանում, ծանուցում է Շվեյցարիայի կառավարության հաղորդագրությունը:

Հայաստանի հրավերին արձագանքելով տիկին Քալմի-Ռեյը Երեւան կժամանի մարտի 30-ի ուշ երեկոյան: Պաշտոնական այցի շրջանակներում նախատեսված է զրույց Սերժ Սարգսյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի, արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հետ: Շվեյցարիայի նախագահը կհանդիպի նաեւ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդին:

Միշելին Քալմի-Ռեյի ձեռամբ Երեւանում հանդիսավորապես կբացվի Շվեյցարիայի դեսպանությունը:

Նախատեսված է այց 1988-ի երկրաշարժից աղետի գոտու վերածված Գյումրի:

Թուրքիան ու Վրաստանն ուզում են Կովկասում մինի ԵՄ ստեղծել

Թուրքիան ու Վրաստանը ցանկություն ունեն դյուրին դարձնել իրենց երկրների քաղաքացիների համար հարեւան երկիր այցերը՝ մուտքի համար միայն անձնագիր պահանջելով: Այդպիսով կզարգանան երկկողմանի հարաբերություններն ու առեւտուրը, իրազեկում է ShortNews-ը մարտի 29-ին:

Անցյալ ամիս արդեն Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն եւ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին քննարկել են Կովկասյան միության պայմանները, որ ներառելու է Հարավային Կովկասում մյուս երկու հարեւանների՝ Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայությունը նաեւ:

«Մենք բաց ենք անում դռները՝ խաղաղությունը եւ տնտեսական զարգացումը մեր տարածաշրջան բերելու համար», վրացերուական բարեկամության խմբի նախագահ Սելալ Էլբայի խոսքից մեջբերում է ShortNews-ը՝ եզրափակելով՝ Կովկասյան միությունը պիտի շատ խոչընդոտներ հաղթահարի, բայց բացառիկ հնարավորություն է:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Նոյեմբերին Փաշազադեն կգա Հայաստան

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգից երեկ հաստատեցին, որ նոյեմբերի 28-30-ին Էջմիածնում կայանալիք ԱՊՀ երկրների միջկրոնական խորհրդի նիստին կմասնակցի նաեւ Կովկասի մահմեդականների առաջնորդ Ալլահշուքյուր Փաշազադեն: **Վահրամ քահանա Մելիքյանը** «**Ազգ**»-ի հետ զրույցում չմանրամասնեց, թե նիստի ընթացքում ինչ հարցեր են քննարկվելու, սակայն չբացառեց, որ գուցե միջոցառման շրջանակներում տեղի ունենա երկու երկրների կրոնական առաջնորդների հանդիպումը:

Ավելի վաղ Կովկասի մահմեդականների առաջնորդը Վլադիկավկազի ադրբեջանցիների հետ հանդիպման ժամանակ հայտնել էր, որ հնարավոր է համարում հանդիպումը Հայոց կաթողիկոսի հետ:

Հիշեցնենք, որ նախորդ տարի ապրիլին Բաքվում՝ համաշխարհային կրոնական գագաթաժողովի շրջանակներում կայացավ Մոսկվայի եւ համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ Երկրորդի, Գարեգին Երկրորդի եւ Ալլահշուքյուր Փաշազադեի հանդիպումը: Հանդիպման մասնակիցները Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ հռչակագիր ստորագրեցին: Փաստաթղթում նշվում էր, որ կրոնական առաջնորդները ողջունում են կողմերի բարի կամքի դրսեւորումները, ռազմագերիների ազատ արձակումն ու քաղաքական եւ կրոնական գործիչներին կոչ են անում ակտիվացնել ջանքերն այդ ազնիվ ու մարդասիրական գործընթացում:

Հ. Հ.

«Մեր որոշ դեսպանների մերոնք են սպանել»

Թուրքական «Թարաֆ» թերթին հայտարարել է ոստիկանության հատուկ նշանակության գործողությունների վարչության նախկին աշխատակից Չարքնը

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԵՏՅԱՆ

Թուրքիայում «խորքային պետության» ռազմականացված թեւի՝ «Էրգենեքոն» ահաբեկչական կազմակերպության «սեւ արկղի» համարում ունեցող եւ այդ գործով մեղադրվող Թունջայ Գյունեյնը «Թաֆվիմ» թերթին տված հարցազրույցում, որը հունվարի 21-ին արտատպել էր «Զամանը», հայտարարել էր. «Մենք չպետք է ԱՍԱԼԱ-ի մեջ որոնենք արտերկրում թուրք դիվանագետների սպանությունն իրականացնողներին»:

Ի դեպ, ահաբեկչական այս կազմակերպության գործունեությունը բացահայտող առաջին փաստաթղթերը 2008-ի ապրիլի Ստամբուլում հայտնաբերվել էին հենց Գյունեյնի լքած բնակավայրում, քանի որ ինքն արդեն տեղափոխվել էր Կանադա, որտեղ էլ կարգվել էր հրեական համայնքի ռաբբի: Այսինքն՝ նա սաբբայական է՝ առերեւույթ մահմեդականություն ընդունած սալոնիկյան ծագումով հրեա:

Գյունեյնը, տալով «Թաֆվիմ» թերթին հունվարի 26-ի համարում հրապարակված երկրորդ հարցազրույցը, հետեւյալ հայտարարությունն էր արել. «Թուրք դիվանագետներին ԱՍԱԼԱ-ի ֆողի տակ հանցագործ խմբի միջոցով «խորքային պետությունն» է սպանել»: «**Ազգը**» հունվարի 25-ի եւ փետրվարի 1-ի համարներում անդրադարձել էր Գյունեյնի հարցազրույցներին, նշելով, որ կարեւորը ոչ թե ԱՍԱԼԱ-ի մասին նրա «բացահայտումներն» են, այլ դրանց միտումը:

Պարզապես Գյունեյնի նշած հանցագործ խումբը ղեկավարում էր 1996-ի նոյեմբերի 3-ին առեղծվածային ավտովթարում մահացած Աբդուլլահ Չաթլին, որը 1980-ի սեպտեմբերի 12-ի պետական հեղաշրջումից հետո ԱՍԱԼԱ-ի դեմ պատասխան գործողությունների դիմելու հանձնարարական էր ստացել գեներալ Քենան Էվրենի վարչախմբից: 90-ականների սկզբներին Ղարաբաղյան պատերազմի թեժ օրերին Չաթլին հաճախակի էր հայտնվում Ադրբեջանում, նա վերադասն էր Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդի դեմ մահափորձ կատարած Մեհմեդ Ալի Աղջայի:

Այլ կերպ՝ Չաթլիի խումբը, որը ավտովթարից հետո ստացել է Սուսուրլուքի խումբ անունը, պետական հանձնարարական էր կատարում նաեւ Ղարաբաղյան պատերազմում: Այդ մասին «Թարաֆ» թերթի մարտի 28-ի համարում վկայում է թուրքական անվտանգության ուժերի հատուկ նշանակության գործողությունների թիմի նախկին անդամ Այհան Չարքնը:

Տես էջ 2

Նոր պատերազմը Հարավային Կովկասում անթույլատրելի է

«Ղարաբաղյան հակամարտությունը «սառեցված» չէ, այլ շարունակվող է», հայտարարել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ռոբերտ Բրադկեն «Ազերիպրես» գործակալության Վաշինգտոնում գտնվող թղթակցին: Նրա խոսքերով, «Հնարավոր է՝ Լեռնային Ղարաբաղի հետ կապված սատուս քվո ձեռնտու է ինչ-որ մեկի, սակայն առկա վիճակը կայունություն չի երաշխավորում»:

Ամերիկացի համանախագահները կարծես հակում եւ ձգտում ունեն ոչ միայն որոշ մանրամասների անդրադառնալու ղարաբաղյան հակամարտության կարգավորման առնչությամբ, այլեւ երբեմն էլ իրենց կարծիքը ներկայացնելու այն դեպքում, երբ այդպիսի վարքագիծ չեն դրսեւորում ոչ ռուսաստանցի, ոչ ֆրանսիացի համանախագահները: Ամեն դեպքում, տպավորությունն այնպիսին է, թե Ռոբերտ Բրադկեն էլ է գնում իր նախորդի՝ Մեթյու Բրայզայի հետքերով:

Բրադկեն, ելույթ ունենալով Քարնեգիի վաշինգտոնյան հիմնադրամի՝ ղարաբաղյան հակամարտությանը նվիրված մարտի 28-ի կոնֆերանսում, նշել է, թե հարավկովկասյան տարածաշրջանի ժողովուրդները «ավելի լավ, կայուն եւ ունեւոր ապագայի են արժանի, եւ այդ ապագայի համար նրանք պետք է օգտվեն բոլոր հնարավորություններից»: Հայտարարելով, թե ղարաբաղյան խնդրին ակնկալվող ուշադրություն չի դարձվում, Բրադկեն ընդգծել է, թե հակամարտության առնչությամբ իրավիճակը դեռեւս կայուն չէ, խնդիրն էլ «մշտապես չի լուսաբանվում մամուլում»:

Միեւնույն ժամանակ, բավականին հետաքրքրական համատեքստում Բրադկեն հիշեցրել է, որ ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի նախագահների մի շարք հայտարարություններն այս հակամարտության առնչությամբ վկայում են հարցը խաղաղ ճանապարհով լուծելու կարեւորության մասին, ընդ որում, «պետքարտուղար Հիլարի Քլինթոնի առաջին այցելությունը Ադրբեջան ի պաշտոնե» եւս այդ համատեքստում էր, հատկապես որ «այդպիսի այցելությունը սպասվում էր երկար տարիներ»:

Բրադկեն, այս ամենով հանդերձ, հայտարարել է, որ, նկատի ունենալով համանախագահներին, «բոլոր կողմերն են համաձայն Հարավային Կովկասում նոր պատերազմի անթույլատրելիությանը»:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մոսկվայի հետաքրքրական մարտավարությունը

Մարտի 5-ին Սոչիում ՌԴ նախագահի նախաձեռնությամբ կայացած Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ հանդիպումը, ըստ ռազմական փորձագետ **Դավիթ Ջամալյանի**, եւս մեկ անգամ ցույց տվեց Մոսկվայի հետաքրքրական մարտավարությունը՝ որպես ԼՂ հիմնահարցի միջնորդի: Երեկ կայացած ասուլիսում փորձագետը կարծիք հայտնեց, որ վերջին նման հանդիպումներից հետո թեկուզ չնչին, բայց տեսանելի արդյունք կա: «Կոնկրետ Սոչիի հանդիպման կարեւորագույն արդյունքը համարում եմ ռազմագերիների վերադարձը», նշեց Ջամալյանը՝ հավելելով, որ ներկա պահին անհրաժեշտական կլինի հումանիտար գործակցությունից ավելին պահանջել նախագահների հանդիպումից: Ինչ վերաբերում է շփման առաջին գծում, նախագահների հանդիպումից հետո եւ առաջ ադրբեջանական կողմի սովորություն դարձած սադրանքներին, ապա փորձագետը կարծիք հայտնեց, որ դրանք ուղղված են ինչպես արտաքին, այնպես էլ Ադրբեջանի ներքին ոլորտներին: «Բախուն ցույց է տալիս միջազգային հանրությանը, որ ինքը պատրաստվում է պատերազմի՝ լուծելու իր համար «կենսական նշանակություն» ունեցող ԼՂ հիմնահարցը: Պատահական չէ, որ հատկապես եվրոպական ամենաստաբեր հարթակներում վերջին ժամանակներում Ադրբեջանը հանդես է գալիս, ես կասեի՝ էկզոտիկ հայտարարություններով, ըստ որոնց՝ Ադրբեջանում չի կարող լինել լիարժեք ժողովրդավարություն, քանի դեռ չլուծված է մնում ղարաբաղյան հիմնահարցը», ասաց Ջամալյանը: Ինչ վերաբերում է ներքին ոլորտին, ապա, փորձագետի մեկնաբանմամբ, հեղափոխություն ապրած արաբական երկրների նման «արտակարգ՝ պատերազմի պատրաստվող իրավիճակում» տեւական ժամանակ գտնվող Ադրբեջանի նախագահը սրում է վիճակը այնտեղ, որպեսզի ադրբեջանցի հասարակությանը հնարավորինս համախմբի իր իշխանության շուրջը. «Այս գործում Իլհամ Ալիեւի համար խիստ կարեւոր են ադրբեջանցի դիպուկահարները: Պատահական չէ, որ այդ երկիրը պատրաստակամություն չի ցուցաբերում ընդառաջելու միջնորդ երկրների հորդորներին՝ հանել դիպուկահարներին շփման առաջին գծից, ինչի վերաբերյալ հայկական կողմերը բազմիցս են հայտնել իրենց պատրաստակամությունը, եթե այդ քայլը լինի երկկողմանի», եզրակացրեց Ջամալյանը: Հ. Ա.

«Մեր որոշ դեսպանների մերոնք են սպանել»

1-ին էջից

Ի դեպ, նա Սուսուրլուքի ավտոթարից հետո «խորհրային պետության» պատվերով սպանություններ կատարելու եւ որպես հրաձիգ այդ պետությանը ծառայելու մեղադրանքով դատապարտվել էր, որից հետո էլ վտարվել էր ոստիկանական կազմակերպությունից:

Մարտի 27-ին անվտանգության ուժերի կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի վարչությունը վերստին ձերբակալել է նրան, այս անգամ արդեն «Էրգենեկոնի» գործով: Սա «Էրգենեկոնի» գործին Սուսուրլուքի գործի սերտ առնչության վկայությունն է, եւ այդ մասին ձերբակալությունից առաջ «Թարֆին» տված հարցազրույցում խոստանում է ինքը՝ Չարքինը, չմոռանալով, իհարկե, Չաթլիի եւ ԱՍԱԼԱ-ի մասին:

Չարքինը նշում է, որ ինքը անվտանգության ուժերի հատուկ նշանակության գործողությունների վարչությունում աշխատել է 1986-1990 թթ., գործուղվել է Դրաբենկ Դիարբեքիր, ականատես է եղել, թե թուրքական ժանդարմերիան շրջակա գյուղում ինչպիսի սպանություններ է կատարում կամ ինչպես է ձերբակալվածներին խոշտանգումների ենթարկում քաղաքային բանտում:

Այնուհետեւ նա անդրադառնում է «Էրգենեկոնի» գործին՝ ասելով. «Երբ 161 զինծառայող ձերբակալվեց, մտածեցի, որ արդարությունն վերականգնվում է: Պաշտոնից ազատվեց նաեւ Ստամբուլի գլխավոր դատախազ Այֆութ Ջենգիզ Էնգինը: Նա էր կարձել Սուսուրլուքի գործը: Դա ինձ խոսելու հիմք տվեց: Շուտով, սակայն, զգացի, որ սխալվել եմ: Մի՞թե սա դատավարություն է (նկատի ունի «Էրգենեկոնի» գործի դատավարությունը), ինչո՞ւ չեն բացում ԱՍԱԼԱ-ի թղթապանակը, իմանալու համար, թե ով է սպանել մեր դեսպաններին»:

Թղթակցի «Ո՞վ է սպանել» հարցին Այհան Չարքինը տալիս է հետեւյալ պատասխանը. «Չաթլին զգաց, որ (պետությունն) իրեն օգտագործում է հայկական հարցում: Մեր դեսպաններին սպանողները էլի սրանք (Չաթլին եւ նրա խումբը) են: Սրանց գործունեությունն մինչեւ Լեռնային Ղարաբաղ է ձգվում: «Էրգենեկոնը» ներկա է նաեւ այնտեղ: Հայերի վրա ենք հարձակվում, չէ՞: Երբ այնտեղ սպանդ ես կատարում եւ լուսանկարում, ապա սպանդը հինգնաբերաբար վերագրվում է հայերին: Չիլլերի վարչապետության տարիներին ամեն լիազորություն տրվել է այս անձնավորությանը (Չաթլիին): Համապատասխան փաստաթղթերը արխիվներում են պահպանվում: Մեսութ Յըլմազը (նախկին վարչապետ) ասում է, որ չի կարող բացահայտել մարտի 12-ի դեպքերը, որովհետեւ պետական գաղտնիք է: Ի՞նչ գաղտնիք: Սրանք հանցագործ կառույց են ներկայացնում, որի մեջ ընդգրկված էին ժամանակի պետական գործիչները»:

Ժնեւում դեմ են Աբել քահանա Մանուկյանի տեղափոխմանը

Մարտի 17-19-ին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոսի նախագահությամբ գումարված Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովին «**Ազգ**» օրաթերթն արդեն անդրադարձել է: Որոշում էր կայացվել Շվեյցարիայի հայոց թեմում նշանակել առաջնորդական տեղապահ ի դեմս Մայր աթոռի փոխդիվանապետ Մեսրոպ աբեղա Պարսամյանի՝ ձեռնամուխ լինելու Շվեյցարիայում թեմական կյանքի վերակազմակերպմանը, եւ միաժամանակ ծառայելու իբրեւ Ժնեւի հայ համայնքի հոգեւոր հովիվ:

Որոշվեց նաեւ Ժնեւի հոգեւոր հովիվ Աբել քահանա Մանուկյանին այլ ծառայության հրավիրել Մայր աթոռ Սուրբ Էջմիածին:

Ժնեւի Հայոց եկեղեցական խորհրդի ատենապետ Վիգեն Վարձպետը «**Ազգ**»-ին ուղարկված հաղորդագրության մեջ հայտարարել է, որ իրենք չեն «լիազորում» Ժնեւի հոգեւոր հովիվ Աբել քահանա Մանուկյանին նրա կամքին հակառակ անցնել այլ աշխատանքի. «Մենք նաեւ չենք ընդունում Մեսրոպ աբեղա Պարսամյանին կամ որեւէ այլ անկոչ քահանայի: Որպես նրա գործատու եւ հավելով առնելով շվեյցարական օրենքները, մենք պարտավոր ենք պաշտպանել Ժնեւի հոգեւոր հովիվ Աբել քահանա Մանուկյանին պետք է շարունակի ծառայել որպես Ժնեւի հոգեւոր հովիվ:

Հաշվի առնելով, որ նա ամուսնացյալ քահանա է, ապա վերջին խոսքը պատկանում է իրեն՝ ցանկանո՞ւմ է իր ընտանիքի հետ տեղափոխվել որեւէ այլ տեղ, թե՞ ընդունում է որեւէ այլ աշխատանք կամավորության սկզբունքով: Աբել քահանա Մանուկյանը հստակորեն մատնանշել է, որ կցանկանար շարունակել իր հոգեւոր գործունեությունը Ժնեւում: Հետեւաբար մենք չենք ընդունում, որեւէ այլ մարմնի որոշում, որը կհակադարձի վերոնշյալ որոշմանը»: Հ. Հ.

Խնդակցություն

Մեր թերթի աշխատակիցներից Մարինե Այունցը եւ ամուսինը՝ Սերգեյ Բալայանցը բախտավորվել են առաջնեկ աղջիկ զավակով՝ **Մարինա**:

Մեր ջերմ խնդակցությունները:

ԿՈՂՈՊՈՒՏԻ ԱՐՏԱՔՈՅ ԴԵՊՔ

Աղտակ ոստիկանության երեսին

1-ին էջից

Սա էլ ոչինչ, մի կերպ կուսվեր՝ ամեն անգամ կոնկրետ դեպք ճնելու եւ ընդհանրացումների չտանելու առումով, որովհետեւ մեր հասարակության համար օդի ու ջրի պես պետք է վստահություն վայելող, չկոռումպացված, չքաղաքականացված, հասարակ հայ մարդու, երկրի քաղաքացու շահերը պաշտպանող ոստիկանություն: Սակայն երեկվա դեպքը համը հանեց՝ սերիալների բստրոցին արժանի պատահար, անհավանական բան, հոլիվուդյան ֆիլմի մոտիվ, էլ ինչ ասես կարելի է զուգահեռել: Անգամ հաշվի առնելով կողոպտչի կոչումն ու պաշտոնը՝ մտածում ես, թե տեսնես ի՞նչ կտրուկ պատճառ է ունեցել այսպես վարվողը՝ միգուցե երեխայի վիրահատության համար մեծ գումա՞ր է պետք եղել, ինչպես ֆիլմերի սյուժեներում է լինում, կամ միգուցե կինն ասել է՝ այսքան գումար չբերես՝ բաժանվում եմ: Կասակը մի կողմ՝ ոստիկանության կոլեգիա վերջերս այցելած նախագահ Սարգսյանի խիստ մեսիջների եւ ոստիկանությունում սկսված բարեփոխումների ֆոնին՝ այս պատահածն ուղղակի աղտակ է ոստիկանության եւ ոչ միայն ոստիկանության երեսին:

Ժամը 17:30-ի սահմաններում ոստիկանության կայքէջում դեռ լուր չկար կատարվածի մասին, մինչդեռ բոլոր մյուս լրատվական կայքերն, այդ թվում՝ «Ազգ-օնլայնը», այդ լուրը վաղուց էին տվել: Պաշտոնական լուր չկա՝ կասկածն ու անվստահությունն են խորանում: Արդար լինելու համար նշենք, որ նույն ոստիկանությունն օրերեսիվ արձագանքել է դեպքին ու անմիջապես վնասազերծել հանցագործ-ոստիկանին, դեռ բոլոր շեֆերով անմիջապես հայտնվել դեպքի վայրում, սակայն ընդհանուր առմամբ դեպքը լուրջ մտորելու տեղիք է տալիս: Միգուցե արժե՞ մտածել ուժային կառույցների բազմահազար անձնակազմերին կրճատելու հաշվին ուժայինների աշխատավարձերը բարձրացնելու մասին՝ լավ ու որակյալ, բարձր աշխատավարձով եւ չկոռումպացված, բարձր աշխատավարձով ոստիկանից կարելի է ամեն ինչ պահանջել: Միգուցե կարիք կա կրթական եւ բարոյական չափանիշներ սահմանել ոստիկան դառնալու համար, բայց էլի նախ բարձր աշխատավարձ սահմանելուց հետո միայն: Թե չէ այդ ովքե՞ր են աշխատում ոստիկանությունում, ո՞նց նրանց վստահենք մեր անվտանգությունը: Միգուցե արժե՞ ոստիկանության բարձր պաշտոնյաներին եւս թույլ չտալ թանկարժեք ու շեյխական կյանքի ասրիբուտներ ունենալ ու ցուցադրել, որ ընդօրինակման օբյեկտ չդառնան խեղճուկրակ աշխատավարձերով միջին եւ ստորին աշխատակիցների համար: Միգուցե հենց ոստիկանապետն ինքը պետք է հասարակության մեջ վստահություն վայելող, բարձր կրթական ու բարոյական ցենզով լինի: Միգուցեները շատ են՝ եթե շարունակենք թվել:

Հ.Գ.-Որոշ մանրամասներ դեպքից. երեկ, ժամը 12.00-ի սահմաններում Ա. Հակոբյանը, դեմքը ծածկած, մուտք է գործել նշված բանկի վարչական տարածք եւ «Մակարով» ատրճանակի գործադրմամբ ավազակային հարձակում կատարել բանկի աշխատակիցների նկատմամբ՝ հափշտակելով 37800 ՌԴ ռուբլի, 1 միլիոն 724 հազար դրամ, 385 եվրո, 6695 դոլար: Հանցագործությունը, ըստ տարբեր աղբյուրների, կանխվել է բանկում ծառայություն կատարող ոստիկանության աշխատակցի շնորհիվ, որը, չնայած հանցագործի գործադրած զենքի սպառնալիքին, իրեն ամրակցված «Մակարով» ատրճանակով Ա. Հակոբյանին վնասազերծել է՝ որովայնի եւ ազդրի շրջանում հրազենային վնասվածքներ պատճառելով, հանցագործը տեղափոխվել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն եւ վիրահատվել:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Երեւակայությունից էլ անդին գներ Հայաստանում

«Թանկից էժանը չկա» ասացվածքը Հայաստանի սուպերմարկետների տերերը յուրովի են հասկանում

Երեւանից ժամանակավորապես հեռու գտնվողի համար Հայաստանի սուպերմարկետներում ու առեւտրային այլ ցանցերում վաճառվող որոշ ապրանքների գները երեւակայությունից հեռու որակելն անգամ կարելի է համեստ գնահատական համարել: Խոսքը թե՛ առօրյա անհրաժեշտությունների շարքին դասվող սննդատեսակներին է վերաբերում, թե՛ ալկոհոլային խմիչքներին:

Ասենք, վարսակին, Ռուսաստանի Դաշնությունում արտադրված ու ներմուծված արագ պատրաստվող տարատեսակին: Ընդամենը 35 գրամ կշռող փաթեթը, որը հազիվ 2 կամ 3 ճաշի գդալ է, վաճառվում է 170 դրամով: Ընթերցողի գործը հեշտացնելու նպատակով նշենք, որ շիլայի համար օգտագործվող այս հացազգու 1 կգ-ի գինը կազմում է 5000 դրամ: Այս գնի գոյացման վրա թեռեւ ազդել է որոշ չորացված մրգատեսակների առկայությունը, որոնք կիլոգրամ քաշի մեջ հազիվ 20-30 գրամ կազմեն. նկատենք, որ այդ չոր մրգերն իրենք իրենցով 2-3 հազար դրամից չեն անցնում: Նման գնի միակ բացատրությունն այն է, որ դրանք Մոսկվայի կենտրոնում մեր 5000 դրամին համարժեք ռուսական ռուբլով են վաճառվում: Այնպես որ ներմուծողներն այս շիլան Հայաստան հասցնելով՝ իրենց գնորդներին մի բան էլ լավություն են անում: Ճաշակեք, անուշ լինի, հիվանդների աչքը լույս, երեխաներին բարի ախորժակ:

Երբ օրերից մի օր սուպերմարկետից վերադարձա ու տնեցիներիս ասացի, որ 25000 դրամ արժեցող երշիկ եմ տեսել, չհավատացին: Դարձյալ ՌԴ-ից ներմուծված, պիտակում նշված ստույգ գինը հայտնեմ, 1 երշիկաձողը՝ 24858 դրամ: Տավոք, քաշի մասին ոչինչ գրված չէր, բայց, կարծում եմ, 1 կիլոգրամ կլիներ: Այնպես որ ռազմավարական դաշնակից համարվող երկրից ներմուծված միայն գազը չէ, որ մեզանում անհերեւակայելի գնով է վաճառվում: Տավոք, լիաթոք կատակելու տրամադրություն չունեմ, այլապես մանրամասն կնշեի, որ երշիկի այս տեսակը ներմուծվել է զուտ այն պատասխանատվությամբ, որ պատրաստված է հայաստանցիներիս կյանքի երկարացմանը նպաստող մինչեւ 6 ամսական դեռեւս չբացահայտված կենդանու մսից: Վայելեք այն ու Աստծո յուրահանչյուր օրը հպարտացեք, որ ապրում եք մի պետությունում, ուր զոր ու գիշեր են մտահոգ ձեր վաղվա օրվա համար: Հապա ինչ, մերոնց արտադրած երշիկի համն ուր, ռուսների արտադրածի որակն ուր: Ոչինչ որ թե՛ Հայաստանում, թե՛ Ռուսաստանում միսը հիմնականում ներմուծվող է, էլ Հնդկաստանից ու Լեհաստանից, Բրազիլիայից ու Կանադայից: Մի խոսքով, գնեք, չեք զղջա, 25 հազար դրամի եղածն ինչ է, ընդամենը միջին ամսական կենսաթոշակ:

Պանիր բառը լսելիս հարգարժան ընկերներիցս մեկին եմ հիշում, որ տարիներ առաջ երեխաներին համոզում էր հաց ու պանիր ուտելիս վերջինը հացից մեծ պատառներով օգտագործել: Իսկ ահա մեր օրերում նմանվեցինք այն վանեցուն, որ պանիրը հացի վրա դնելով ու ուտելիս բթով հրելով, վերջում ասում էր. պանրի այս կտորն էլ վաղը կվայելեմ: Դա հիմա վանեցու մասին չէ, հիմա հայաստանաբնակներիս 10-ից 9-ին է վերաբերում: 10-երորդը... դե նրա արյունը կապույտ է, նա կարող է իրեն թույլ տալ գնել Երեւանի սուպերմարկետներում վաճառվող կիլոգրամը 12000 դրամից մի փոքր ավելի գնահատված «Կաստելլո» պանիրը: Հավելենք, որ մարդիկ բարյացակամ են եղել ու այս գնի իջեցման նախաձեռնություն են հանդես բերել. խնդրեմ, կիլոգրամը գնեք 9600 դրամով:

Բա կոնյակը, մեր ազգային արժեքն ու բրենդը, հպարտությունն ու պարծանքը: Այս խմիչքի «Պարույր Սեւակ» պիտակով տեսակը Երեւանի սուպերմարկետների որոշակի բարձրություն ունեցող ցուցատեղերում վաճառվում է որոշակի բարձրության գնով. 0,7 լիտր տարողության շշի վրա նշված է 550 000 դրամ: Խոսքը արտադրատեսակի 1 դյուժինին չէ, որ վերաբերում է, այլ 1 շշին, որի լիտրը սպասվում է ոչ ավել, ոչ պակաս, 820.000 դրամ: Պարզապես 0,7 լիտրանոցով է վաճառվում, որ երեւակայությունից էլ անդին գնահատականին չարժանանա:

Շուկայական հարաբերության պայմաններում, որը մեզանում յուրօրինակ դրսեւորումներ է ցուցադրում, իհարկե կարելի է նշված ապրանքները մասսայական ներկայացնել: Դրանց կոնկրետ վայրերը չենք նշում, քանզի կարող ենք արդեն ավանդական դարձող հակագովազդային գործունեության մեջ մեղադրվել ու դատական կարգով մի քանի միլիոն տուգանքի արժանանալ: Թեման շոշափելու առիթ էլ չէր լինի, եթե ապրանքները վաճառվեին մասնագիտացված խանութներում, այլ ոչ ի տես մեր ընչազուրկ գնորդների: Օրինակ՝ հարցիս, թե

ամիսը քանի շիշ «Պ. Ս.» է վաճառվում, աչխատակցուհին գլուխն աջ ու ձախ շարուբերեց, որից չհասկացա՝ չի՞ վաճառվում, թե՞ ասել չի կարող:

Այստեղ, Եվրոպայի կենտրոնում գտնվող Ավստրիայում, նշված ապրանքատեսակների հիշատակված գներին անգամ մոտ գների չես հանդիպի, քանզի դա գնորդի հանդեպ արհամարհանքի դրսեւորում կհամարվի: «Շպար», «Պեննի», «Բիլլա», «Լիդլ» եւ այլ սուպերմարկետներում, որոնց ցանցերը գործում են մայրցամաքի մի քանի երկրներում, հեղինակիս չհաջողվեց մեզանում ներկայացված պատկերներին մոտ ինչ-որ բան տեսնել. հանրահայտ ավստրիական երշիկներն, օրինակ, վաճառվում են նկարում պատկերված գներով: Նույնն է առաջին անհրաժեշտության բազմաթիվ այլ պարենամթերքների առումով: Այնպես որ լիարժեք հինավորված է արտերկրներում հարազատ-բարեկամներ ունեցող մեր հայրենակիցներ հարազատ-բարեկամներ ունեցող մեր հայրենիհազարավոր համերկրացիների այն համոզմունքը, թե գները Հայաստանում երեւակայությունից էլ անդին են:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒԲՈՒՄՅԱՆ

Ավստրիա, Գրաց

Նուբարաշենի աղբավայրը՝ լրջագույն հարց

«Նուբարաշենի աղբավայրը լուրջ վտանգ է ներկայացնում ոչ միայն Երեւանի, այլեւ ամբողջ Արարատյան դաշտի ու շրջակա գյուղերի համար: Աղտոտվում են ստորգետնյա եւ վերգետնյա ջրերը, ակտիվանում են սողանքները»:

Բնապահպան **Կարինե Դանիելյանի** մեկնաբանությամբ՝ խնդիրը միայն Երեւանի քաղաքապետարանը չի կարող լուծել: «Դա կառավարության որոշելիքն է»: Բնապահպաններին անհանգստացնում է, որ ուսումնասիրությունների փուլը շատ է երկարում: Բավական ժամանակ է անցել, եւ անհրաժեշտ են օպերատիվ ու ռազմավարական միջոցառումներ: «Առաջարկություն է արվել հնարավորինս մեկուսացնել աղբավայրը, սակայն դա հարցի վերջնական լուծում չէ: Բոլոր դեպքերում աղբավայրն այնպիսի վիճակում է, որ թույները պետք է դուրս բերվեն եւ ոչնչացվեն: Այստեղ գումարի խնդիր է: Սակայն ակնհայտ է, որ պետք է արագացնել գործընթացը»:

Վկայակոչելով վերջին ուսումնասիրությունները՝ բնապահպանը փաստում է, որ գնալով շրջակա միջավայրի աղտոտվածությունն ընդլայնվում է եւ հասնում Երեւանին:

Հիշեցնենք, որ ամիսներ առաջ բնապահպանները հայտնաբերել էին, որ խորհրդային տարիներին ստեղծված Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցը տրակտորով քանդվել է, ինչի հետեւանքով թույնը դուրս է եկել ու կարող է Հայաստանի համար միջուկային զենքի ազդեցություն ունենալ:

Հ. Հ.

«ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿ

Ռաֆֆին կպատասխանի այսօր

«Մենք հասկանում ենք, որ ձեր կոչը՝ իշխանությունը վերադարձնելու ժողովրդին, ձերբազատվելու կոռուպցիայից, կասեցնելու արտագաղթը, վերացնելու անարդարությունը, նպատակ ունի մեր սերնդի համար ապահովել բարեկեցիկ ու արժանապատիվ ապագա: Խնդրում ենք Ձեզ դադարեցնել հացադուլը ու շարունակել ձեր գործունեությունն այլ ասյաններում»:

Սա մի հատված է աբակերտների՝ «Ազատության» հրապարակում անժամկետ հացադուլ հայտարարած Ռաֆֆի Հովհաննիսյանին ուղղված կոչից:

«Ժառանգության» առաջնորդն էլ նրանց խոստացավ, որ այսօր կկարողանա նախնական ու ամբողջական պատասխան տալ հասարակությանը հուզող բոլոր հարցերին:

«Կդադարեցնե՞ք հացադուլը» հարցին էլ ասաց, որ բոլոր հարցերին կպատասխանի այսօր ժամը 5-ին:

Մինչ այդ, «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը երեկ կարծիք հայտնեց, որ եթե «Ժառանգության» առաջնորդին դիմի կաթողիկոսը, ապա Ռաֆֆին նրան կլսի: «Քանզի հոգեւոր դասի ներկայացուցիչներն այլ կարգավիճակում են գտնվում»:

Մինչ «Ժառանգության» առաջնորդը որոշում է հետագա քայլերի հերթականությունը, բժիշկները մտահոգված են նրա առողջական վիճակով:

4-րդ պոլիկլինիկայի բժշկուհի **Թինա Մալխասյանը, որ հացադուլի մեկնարկից սկսած ամեն օր զննում է Հովհաննիսյանին, «Ազգ»-ի հետ զրույցում ասաց, որ նկատվում են ճնշման տատանումներ:**

Բժշկուհուն անհանգստացնում է, որ Հովհաննիսյանն օրեցօր ավելի թիչ ջուր է խմում: «Դա շատ վտանգավոր է, որովհետեւ օրական անհրաժեշտ է 2-3 լիտր հեղուկ օգտագործել: Եթե նա շարունակի հացադուլը, ապա կառաջանան լյարդի, երիկամների ու տեսողության լուրջ խնդիրներ»:

Թինա Մալխասյանի ներկայացմամբ՝ առայժմ վերոնշյալ հիվանդությունների նշաններ չկան, սակայն օրեցօր վտանգն ավելի է մեծանում:

Հ. Հ.

Ավտոմեքենաների տեխզննումը ձեւական բնույթ է կրում

«Ափիլլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի նախագահ Էդուարդ Հովհաննիսյանը եւ իրավաբան Արեգ Խուրշուդյանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ ներկայացրին այն անօրինական գործառույթները, որոնք տեղի են ունենում մեքենաները տեխնիկական զննում անցկացնելիս: Ըստ պրն Հովհաննիսյանի՝ խորհրդային ժամանակներից մեզ ժառանգություն հասած ավտոմեքենաների ձեւական տեխզննումը տասնյակ տարիներ իրականացնում էր ոստիկանության համապատասխան ստորաբաժանումը: Եվ ահա 2009-ից այդ գործառույթը կառավարության թիվ 344 որոշումով տրվեց լիցենզավորված 9 ՍՊԸ-ի Երեւանում եւ 30 ՍՊԸ-ի մարզերում «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին օրենքի» թիվ 15 հոդվածի համաձայն: Չնայած տեխզննման ընթացքում ավտոմեքենան պետք է զննվեր ընդունված փաստաթղթի 64 չափանիշներով ու հետո տվեր համապատասխան կտրոն, սակայն փաստացի տեխզննման կետերում իրականացվում է միայն 1-2 չափանիշի ստուգում՝ արգելակման համակարգ, ղեկային եւ լուսային համակարգ, մեկ-մեկ էլ՝ CO գազը: Ինչպես ասաց պրն Հովհաննիսյանը, սահմանված 64 չափանիշները ստուգելու համար ամենաքիչը 30 րոպե է հարկավոր: Ստացվում է, որ օրական լիարժեք տեխզննում հնարավոր կլինի անցկացնել 18-20 ավտոմեքենա, մինչդեռ արդեն 2010-ին առկա 450.000 գրանցված ավտոմեքենաներից 370.000-ի մոտ 70-75 %-ն անցել է ձեւական տեխզննում: «Ազգի» հարցումներին վարորդներից շատերը վստահեցնում էին, որ բացի սահմանված 10.500 դրամից (թեթեւ մեքենաների համար) վերցնում են 13.000 եւ ավելի, դրանից բացի առձեռն վճարում են 5-10.000 դրամ: Մինչդեռ օրենքի թիվ 24 հոդվածում հստակ նշված է, որ ավտոմեքենայի անսարք վիճակի համար պատասխանատվությունը դրված է վարորդի վրա: Այս դեպքում ո՞ւմ է պետք տեխզննումը եւ ո՞ւր են գնում գանձված գումարները, երբ մեր փողոցների երթեւեկելի հատվածներից շատերն այդպես էլ մնում են դժվար անցանելի ու անբարեկարգ: Այս ամենի վերահսկողությունը դրված է ՀՀ տրանսպորտի նախարարության վրա, նշեց պրն Հովհաննիսյանը եւ տեղեկացրեց, որ բազմիցս այդ խախտումների մասին տեղեկացվել է նախարարության տրանսպորտի վարչությանը եւ ոչ մի փոփոխություն: Մինչդեռ, վարչական իրավախախտումների օրենսգիրքը նախատեսում է. եթե տեխզննման կետում պատշաճ ձեւով չի անցկացվել տեխզննում, բայց տրվել է տեխզննման կտրոն, ապա տվյալ տեխզննման կետի տնօրենը տուգանվում է 500.000 դրամ: Մինչ այսօր ոչ մի տնօրենի չեն տուգանել: Պարզվում է, որ վերահսկողություն իրականացնողները կամ թերացել են, կամ էլ... թողնում ենք ձեր երեւակայությանը (Մ.Մ.): Այս դեպքում ո՞ւմ է պետք ձեւական տեխզննումը՝ հարցնում ենք, երբ վարորդները տեխզննման են դիմում միայն թղթի կտոր գնելու համար: Մինչդեռ ամեն վարորդ պետք է պահանջի, որ իր շահագործող ավտոմեքենան ամբողջովին անցնի տեխնիկական զննում, որը եւ կկանխի շատ վթարներ: Կարծում ենք՝ այս կարեւոր հարցը պետք է բարձրացվի, ու օրենքներում համապատասխան փոփոխություններ մտցվեն:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Դժվար բան է այդ ծովարշավը

Վաղուց եմ ուշադրություն դարձրել, որ համարյա բոլորը, ովքեր մտել են ծովագնացության պատմության մեջ, իրենց իսկ խոստովանությամբ, սկզբում ճամփորդել են խմբերով՝ մեծ կամ փոքր: Եվ համարյա բոլորը, այդ թվում նաեւ իմ հեռավոր պատանեկության կուռք սըր Ֆրենսիս Չիչեստերը, չէին թաքցնում, որ խմբովի նավարկությունների ամենաթեժ պահին, իրենցից անկախ երազում էին միայնակ լողալու մասին: Շատերն են հետո բերել բացառությունների օրինակներ, որոնք հաստատում են կանոնը: Նրանցից են, օրինակ, «խմբասեր» Թուր Հեյերդալը եւ «մենասեր» Ալեն Բոմբարը: Մեկը ազգագրագետ եւ հնագետ էր, մյուսը՝ բժիշկ, որը, ինչպես հաճախ է պատահել բժշկագիտության մեջ, իր վրա դրված համարձակ փորձով որոշել էր օգնել մարդկանց, որպեսզի հավատան իրենց եւ իրենց ուժերին այն պահին, երբ վրա է հասել փորձանքը: Բայց նրանք առաջին հերթին եւ գլխավորապես հայտնի դարձան շնորհիվ կրքով ու ռոմանտիկայով լի իրենց գրքերի:

Դա վաղուց էր: Սեւանի բարձրադիր ափին ես Յուրի Սենկեւիչին պատմում էի հայկական լճի ողբերգական ճակատագրի մասին նրա չափազանց սիրված «Կինոճանապարհորդների ակումբ» հեռուստահաղորդման համար, եւ զրույցից հետո խոսակցություն գնաց Հեյերդալի թիմում «Ռա» պապիրուսային նավակով նրա կատարած նավարկության մասին: Իմացա նաեւ, որ Թուրը (Յուրան Հեյերդալին միայն անունով էր կոչում) հանդիպել էր Բոմբարի հետ եւ բարձր էր գնահատում Ալենի փորձը, որը բոլորովին էլ չէր գիտակցում, որ բժշկի՝ իր հիվանդներին օգնելու ցանկությունը կանվանեն սխրանք: Պարզվեց, որ Բոմբարն անկեղծորեն խոստովանել էր ամենագլխավորը. նա երբեք չէր կարողանա գրել իր «Կամովին նավաբեկյալ» գիրքը, եթե ամբողջ ժամանակ մտածեր, թե իր ընկերակիցը կամ խմբակիցները գուցե համաձայն չլինեն այս կամ այն դրվագի նկարագրությանը: Հեյերդալի համար ավելի հետաքրքիր էր: Նա զբաղված էր իր գիտությամբ, իր տեսությունների հետազոտմամբ, իսկ մյուս բոլորը նրան պետք է օգնեին այդ սուրբ գործում: Եվ երբ Սենկեւիչը Հեյերդալի հերթական հաստոցի լույս տեսնելուց հետո սկսեց աշխատել իր սեփական գրքի վրա, ապա ուշադրություն դարձրեց, որ Թուրը շատ բաներ «բստրում» էր, բայց միաժամանակ էլ, կարծես, ամեն ինչ ճիշտ էր: Եթե իմանայիք, թե որքան ծանոթ է ինձ այդ ամենը: Ահա միայն մեկ օրինակ: «Կիլիկիա»-ն դեռեւս կանգնած էր երեւանյան երկնքի տակ, երբ ես արդեն հավաքում էի կենսագրական տվյալներ, այսպես ասած՝ «իսկություններ» անձնակազմի յուրաքանչյուր անդամի մասին: Պետք էր, որ ընթերցողը ծանոթանար բոլորին՝ առանց բացառության: Այդ այսպես ասած՝ մեթոդը փոխառել էի Հեյերդալից, որը մանրամասնորեն պատմում էր «Կոն-Թիկի» լաստի անձնակազմի յուրաքանչյուր անդամի մասին: Ճիշտ է, «Ռա»-ի ծովարշավում արդեն նա դա անում էր բավական ժլատությամբ:

Ռուս մեծ գրող Իվան Ալեքսանդրովիչ Գոնչարովը քառասուն տարեկանում մասնակցեց «Պալլադա» ֆրեգատի նավարկությանը, որը դիվանագիտական առաքելություն էր կատարում Ճապոնիայի ափերի մոտ: Պատմության մեջ այն մտավ որպես Պուտյատինի առաքելություն: Կոմս Եվֆիմի Վասիլեւիչ Պուտյատինը պետական գործիչ էր, դիվանագետ, զբաղեցնում էր ժողովրդական լուսավորության նախարարի պաշտոնը: Դեռ պատանեկան տարիքում (18-ից 20 տարեկանում) նա շուրջերկրյա նավարկություն էր կատարել: Նրան տրվել էր ծովակալի կոչում: Հայտնագործել էր Ռիմսկի-Կորսակովի կղզիները: Ստորագրել էր ռուս-ճապոնական պայմանագիրը: Այդ նա էր հրավիրել Իվան Գոնչարովին մասնակցելու «Պալլադա»-ի նավարկությանը, եւ միայն «Օբլոմով»-ի հեղինակի շնորհիվ էր, որ այդ նավարկությունն ու նրա ողբերգական ճակատագիրը խորապես պահպանվեցին Ռուսաստանի բոլոր սերունդների հիշողության մեջ: Իսկ վերջերս ես կարդացի մի հիանալի հետազոտություն, որի հիմքում, իհարկե, մեծ գրողի կողմից անմիջականորեն նավում գրված «Ֆրեգատ «Պալլադա» ճամփորդական ակնարկաշարն էր ընկած: Ռեալիստական արձակի վարպետը (այդպես էին կոչում գրականագետները Գոնչարովին) խոստովանում է, որ եթե «Պալլադա»-ի նավաստիների կերպարները նա ներկայացներ պարզապես բնականից պատճենելով, դագերոտիպով (այն ժամանակ այդպես էր կոչվում լուսանկարչությունը), ապա ճանձրալի, ինքնագոհ անձինք կստացվեին: Ես հիանալի հասկանում եմ, որ ստեղծագործության ռեալիստականության չափը, մասնավորապես՝ դիմանկարինը, կերպարինը, որոշվում է իրականության մեջ ներթափանցելու չափով: Այստեղ արդեն կարելի է խոսել գեղարվեստական ճանաչողության եւ՛ խորության, եւ՛ թե լայնության մասին: Եվ այս սկզբունքները վերաբերվում են ոչ միայն զուտ գեղարվեստական ստեղծագործությանը, այլեւ ակնարկին եւ գեղարվեստական հրապարակախոսությանը: Գոնչարովի ճամփորդական ակնարկները կարելի է դասել ե՛ւ առաջինին, ե՛ւ երկրորդին, ե՛ւ երրորդին: Դա նշանակում է, որ խոսքը բուն հեղինակի վերաբերմունքի մասին է ոչ միայն իր հերոսի նկատմամբ, որին ներկայացնում է, այլեւ նպատակի ու խնդրի մասին, որը տվյալ դեպքում լուծում է ողջ թիմը: Միաժամանակ յուրաքանչյուրը հստակորեն գիտակցում է, որ կատարում է ոչ միայն իր նավային պարտականությունը, այլեւ բոլորի համար ընդհանուր՝ ծովարշավորդային դերը: Մեր դեպքում դա նշանակում է, որ մենք ոչ թե մարզական ռեկորդներ սահմանելու համար ենք անցնում օվկիանոսային ճանապարհների ամենադժվար եւ նույնիսկ, ինչպես մասնագետներն են ասում՝ «անհրաժեշտ երթուղիները», այլ այն պատճառով, որ դա է պահանջում սփյուռքի տարաբնակեցման աշխարհագրությունը:

Ինձ թույլ կտամ մի փոքրիկ շեղում կատարել: Բոլորովին վերջերս պարզվեց, որ Ավստրալիայից հետո մենք սխրված ենք լինելու նորից փոփոխություններ մտցնել մեր երթուղու մեջ: Ըստ ծրագրվածի պետք է կանգ առնեինք Ինդոնեզիայի մայրաքաղաք Ջակարտայում՝ Ճավա կղզում, որպեսզի նկարահանեինք հայկական եկեղեցին, որի մասին գրում են բոլոր պատմական աղբյուրները: Բայց արդեն ճանապարհին պարզվեց, որ այդ եկեղեցին չկա: Քանդել են: Բայց ես իմացա (այդ մասին առանձին կպատմեմ), որ պահպանվել է մեկ այլ եկեղեցի Սուրաբայա նավահանգստում, Ճավայի արեւելյան ափին: Դա մոտ յոթ հարյուր կիլոմետր հեռու է Ջակարտայից:

Խոսելով նավային եւ ծովարշավային դերակատարումների մասին, ես պետք է ընդգծեմ, որ մեզանից ոչ ոք չէր պատրաստվում Ամերիկա հայտնագործել: Բարդ բան է այդ շուրջերկրյա ծովարշավը: Ես հիանալի հասկանում եմ, որ այն ամենը, ինչ մենք նկարահանում ենք ու գրի առնում, շատ էլ լավ հայտնի է մասնագետ գիտնականներին, որ Մետրոպ Մաշտոցի անունը կրող մեր ծովարշավի հիմքն այն է, որ Հայաստանի պատմության մեջ առաջին շուրջերկրյա նավարկությունն է՝ Սփյուռքի յուրահատուկ երթուղով: Հիշեցնեմ եւ այն մասին, որ աշխարհաշուրջի առաջին փուլի մեկնարկին Արկադի Ասրյանի «Ամարաս» հրատարակչությունում ես հանդիպեցի հայ ճարտարապետության պատմության երեւելի փորձագետ, պրոֆեսոր Սամվել Կարապետյանի հետ: Ես նրան ասացի, որ մեր խնդիրը, վերջնական արդյունքում, աշխարհաշուրջն է, գիրքը, ալբոմը կամ հայկական եկեղեցիների ու պատմության հուշարձանների ատլասը՝ օտարության մեջ նկարահանված պրոֆեսիոնալ սարքավորումով: Ես իրոք մտածեցի, որ տաղանդավոր օպերատորի կողմից բարձր վարպետությամբ նկարահանված կադրերը կհանձնենք հիրավի արի գիտնական եւ հեռուստահրապարակախոս Սամվել Կարապետյանին: Սամվել Բաբասյանը եւ Հայկ Բադալյանը կօգնեն ճարտարապետության պատմագետին ունենալ նաեւ հայ տաճարաշինության նմուշների եզակի նկարահանումներն ու լուսանկարները, որ կատարել են գործնականում բոլոր եվրոպական նավահանգստային քաղաքներում: Դա ավելի ազնիվ ու ճիշտ կլինի, նաեւ՝ հայրենասիրական:

...Սակայն վերադառնանք մեր զրույցի սկզբին: Պատահական չէ, որ խոսք չբացեցի «խմբասերների» եւ «մենասերների» մասին: Իհարկե, միայնակ մարդու համար ավելի հեշտ է գիրք գրելը: Արդի ուզածին չափ կարող ես տրվել սեփական երեւակայության իշխանությանը, որը կարելի է ռեալիստաբար բացահայտել գրքային նկարագրություններում: Բայց ահա թե ինչ կասեմ անկեղծորեն եւ հանուն արդարության. այնպիսի ծովարշավ, ինչպիսին մերն է, բացարձակապես անհնար է իրագործել ո՛չ միայնակ, ո՛չ էլ մեծաթիվ անձնակազմով: Մանավանդ որ մեր անձնակազմը պարզապես եզակի է: Հուշատետրիցս մի փոքրիկ գրառում ներկայացնեմ. «Նման բան հազվադեպ է պատահում: Իսկ գուցե ուրիշ էլ ոչ մի տեղ չի պատահել: Ես կանգնած եմ իմ սովորական տեղում՝ ընդհանուր նավասենյակի մուտքի մոտ, որտեղից աշխարհի չորս կողմերի լայն տեսադաշտ է բացվում: Իսկ այդ ժամանակ, նավախելի կոկպիտին, բարակ անիվով հսկայական ղեկի մոտ կանգնած են միանգամից յոթ հոգի: Ոչ անհողմություն կա, ոչ՝ փոթորիկ, քամին էլ նորմալ է, ընդհանուր առմամբ՝ համընթաց: Մի խոսքով, հազվադեպ պահ, երբ կարելի է ոչինչ չանել, մանավանդ որ առաջնորդվում ենք նավիգատորով: Եվ ես մտածեցի՝ բայց ախր չէ՞ որ նրանք բոլորն էլ, այդ յոթ հոգին, պարզապես անփոխարինելի են: Հանկարծ հայացքս կանգ առավ բարձր քրքջացող Բաբասի վրա, եւ մտածեցի. «Ոնց անցյալ տարի մեզ հետ չէր»: Ճիշտ է, մեզ հետ չէր նաեւ Սաքոն, բայց դեռ կար մեր լեգենդար կոկը՝ Սամվել Սարգսյանը, Աստված հոգին լուսավորի: Եվ փա՞ռք Աստծո, արդեն քանի անգամ շեշտում եմ՝ Կուզանյան Սաքոյի մոտ ամեն ինչ սպացվում է: Արդեն նա էլ է անփոխարինելիների մեջ: Բայց այ, Բաբա՜նը... Չէ՞ որ «Կիլիկիա»-ի բոլոր երեք փուլերի ժամանակ տեսել էինք, թե ինչպես էր պահում իրեն թե՛ որպես նավաստի, թե՛, որ ամենագլխավորն է՝ որպես օպերատոր: Եվ սակայն չվերցրինք նրան: Որոշեցինք՝ յոթ հոգով ենք գնում, ու վերջ: Շատ անգամներ եմ վերադարձել այս թեմային: Բաբասի թեմային: Բայց հիմա ուզում եմ ասել գուցե ամենակարեւորը: Նույնիսկ շատ լավ է, որ անցյալ անգամ Սամվելը մեզ հետ չէր: Համենայն դեպս հիմա հո գիտենք, որ այնուամենայնիվ կա՛ն անփոխարինելի մարդիկ: Դա նա է: Սամվել Բաբասյանը: Անփոխարինելի օպերատոր՝ հենց արտակարգ իրավիճակներում, անփոխարինելի հերթափոխող, որի գալով մեր գործը շատ ավելի լավացավ ու թեթեւացավ:

Կամ ահա Վահագնը... Բայց նրա մասին արդեն այլ ռեպորտաժում: Այնպես որ, ո՛չ մի մենություն, որքան էլ որ բարդ լինի գիրք գրելը: Միայն խումբ: Միայն թիմ: Միայն անձնակազմ: Եվ միայն... Մետրոպ Մաշտոցի գլխավորությամբ:

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
Խաղաղ օվկիանոս

Բարեգործական համերգի հասույթը՝ Հայաստանի խուլ երեխաներին

Ապրիլի 1-ին գերմանական Նոյենբերգում «Էռնստ Լեհնհարդտ» հիմնադրամը բարեգործական մի երեկո է կազմակերպում, որի հասույթն ուղղվելու է Հայաստանի խուլ երեխաների բուժմանը, իրազեկում է «Բադիշե ցայթունգը»: Բադենվայլերում գործող պրոֆեսոր «Էռնստ Լեհնհարդտ» հիմնադրամի նախագահ Մոնիկա Լեհնհարդտը սույն միջոցառմամբ ցանկություն ունի Հայաստանի խուլ երեխաներին լսել սովորեցնել այսպես կոչված Cochlear պատվաստամիջոցի (Implantat) օգնությամբ: Տիկին Լեհնհարդտի նպատակն է ամեն տարի 3 պատվաստամիջոց նվիրաբերել Հայաստանի երեխաներին: Ապրիլի 1-ին կազմակերպվող երեկոյի մասնակիցները 95 եվրո վճարելով կարող են շանսոն ունկնդրել եւ 4 տեսակի ուտելիք համտեսել՝ երեխաների ճակատագրի փոփոխման հարցում իրենց մասն ունենալով:

2007-ին հիմնադրամն այդպիսի մի բարեգործական միջոցառումից 26 500 եվրո է հավաքել, որն ուղղվել է Ռուսաստանի խուլ երեխաներին օգնելու ծրագրին: Ըստ նախագահի, դրամը հատկացվել է ոչ թե պատվաստամիջոցի (յուրաքանչյուրն արժե մոտ 20 000 եվրո) հայթայթմանը, այլ դա արդեն ունեցող հիվանդների հետվիրահատական կարիքներին, նրանց ապաքինմանը: Գերմանիայում, ուր 1000-ից մեկն է խուլ ծնվում, բուժապահովագրությունը վճարում է ոչ միայն սարքավորման, այլեւ հետվիրահատական ծախսերը: Ըստ հիմնադրամի նախագահի, Ռուսաստանում տարեկան 1400 խուլ երեխա է ծնվում, բայց կառավարությունը վճարում է միայն 60-70 պատվաստամիջոցի դիմաց:

Ինչ վերաբերում է պատվաստամիջոցներ արտադրող չորս ֆիրմաներին, ապա, տիկին Լեհնհարդտի ասելով, շուկայի առաջատարն ավստրալիական Cochlear ֆիրման է, որի՝ Բազելում տեղակայված եվրոպական կենտրոնական մասնաճյուղն է ղեկավարել ինքը 1987-1999-ին: Նրա ամուսինը՝ Էռնստ Լեհնհարդտն է եղել այն պրոֆեսորը, որ Հանովերում 1988-ին առաջին անգամ փորձ է կատարել փոքրահասակ մի խուլ երեխայի «լսողություն պարգեւել»՝ պատվաստ տեղադրելով: Այս գործի մյուս մասնագետը պրոֆեսոր Ռոլանդ Լասցիգն է Ֆրայբուրգի համալսարանից, որ նույնպես հիմնադրամի անդամ է:

Հայաստանում պատկերը տարբերվում է Գերմանիայից եւ Ռուսաստանից: Ըստ հիմնադրամի նախագահի, ամեն տարի Հայաստանում մոտ 40 խուլ երեխա է ծնվում: Մոտ 1,5 միլիոն եվրո է հարկավոր խլությամբ տառապողների կարիքները հոգալու համար, ինչը շեշտում է հիմնադրամ ստեղծելու անհրաժեշտությունը: Դրա համար պիտի Հայաստանի կառավարությանն էլ ստիպել առավել ակտիվ լինել, ասում է տիկին Լեհնհարդտը, որն անընդմեջ լինում է երկրում, կապի մեջ է հայ բժիշկների հետ: Նա տեղյակ է, որ Գերմանիայից ստացվող օգնությունն առաջինն ուղղվելու է մեկամյա Հակոբ Հակոբյանին, վթարի հետեւանքով լսողությունից զրկված հնգամյա Արթուր Պետրոսյանին, 2008-ին ծնված Սուրեն Գրիգորյանին եւ Իսահակ Խաչատրյանին:

«Որքան շուտ է խուլ երեխան պատվաստամիջոցի օգնությամբ լսող դառնում, այնքան վերականգնողական շրջանը կարճանում է, նույնքան արագ կարողանում է խոսել եւ հնարավորություն է ունենում կյանքում ինքնադրսեւորման», ապրիլի 1-ին նախատեսված բարեգործական համերգի իր հրավերն այսպես է ձեւակերպում «Լեհնհարդտ» հիմնադրամը՝ համոզված, որ արտացավ մարդիկ արձագանքելու են:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Արեւելյան գործընկերների տարբեր հաջողություններին՝ ԵՄ տարբերակված մոտեցում

Եվրոմիությունը պատրաստվում է լուրջ վերափոխության ենթարկել քաղաքականությունը նախկին խորհրդային Միության երկրների նկատմամբ եւ այժմ արդեն առավել խիստ պահանջներ սահմանել տրամադրվող օգնության դիմաց: Այդ մասին, ըստ «Ազատություն» ռադիոկայանի, հայտարարել է Եվրոմիության ընդարձակման հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն, ում խոսքով՝ պաշտոնական Բրյուսելը պատրաստվում է մայիսին արդեն շրջանառության մեջ դնել Եվրոպական հարեւանության ծրագրի վերանայված տարբերակը:

«**Ազգը**» դեռեւս մարտի 18-ին անդրադարձել էր արեւելյան գործընկերների հանդեպ մոտեցման վերանայման հանգամանքին: Մասնավորապես տեղեկացրել էինք, որ Եվրոխորհրդարանի արտաքին հարցերով հանձնաժողովն իր մարտի կեսերին տեղի ունեցած նիստում հավանություն էր տվել Հարեւանության ծրագրի վերանայման զեկույցին՝ ինչպես արեւելյան, այնպես էլ հարավային ուղղությունների կտրվածքով: Ըստ զեկույցի, հանձնաժողովի անդամները չէին կարողացել գալ ընդհանուր համաձայնության, թե արդյոք պետք է արեւելյան գործընկերներին ԵՄ-ին անդամության հեռանկար տրամադրել:

Ըստ Եվրոխորհրդարանի աշխատանքային ընթացքի, մարտի վերջին արդեն Եվրոխորհրդարանի քննարկմանը դրվելիք խորհրդարանական բանաձեւում որեւէ կերպ չի նշվում հեռանկարում գործընկերների՝ ԵՄ-ին անդամության հավանականությունը: Արեւելյան գործընկերության առումով ԵՄ մոտեցումների վերանայման մասով բանաձեւի նախագիծը նշում է, որ նորացված հայեցակարգի համաձայն կսահմանվեն առավել հստակ ցուցանիշներ քաղաքական, սոցիալական եւ տնտեսական բարեփոխումների համար, որոնց հասնելու դեպքում միայն գործընկեր երկրները կարող են ԵՄ առավել մեծ աջակցության հույս ունենալ:

Շտեֆան Ֆյուլեի հավաստմամբ, վերանայման գործընթացի արդյունքում միեւնույն քաղաքականությունը կբանեցվի թե՛ հարավային, թե՛ արեւելյան հարեւանների նկատմամբ, սակայն կմեծանան տարբերակումները ոչ միայն Հարավի եւ Արեւելքի միջեւ, այլեւ այդ տարածաշրջանների ներսում նվազագույնի կհասցվեն ընդհանրացված մոտեցումները, եւ առանձին ծրագիր կառաջարկվի յուրաքանչյուր գործընկերոջ:

Ֆյուլեն, փաստացի, մանրամասնել է Եվրոխորհրդարանի մակարդակով քննարկումների բովանդակությունը: Այսինքն՝ վերանայված քաղաքականության իրագործմանը լայնորեն մասնակցելու են Եվրոմիության նոր դիվանագիտական կորպուսներն ու վերջերս ձեւավորված արտաքին գործողությունների ծառայությունը:

«Կարճ ասած՝ կիրառվելու է որքան շատ բարեփոխումներ, այնքան շատ առավելություններ սկզբունքը», ասել է Լեհաստանի արտգործնախարար Ռադեկ Սիկորսկին, ում երկիրը հուլիսին վեց ամսով ստանձնելու է Եվրոմիության նախագահությունը: Ըստ նրա, Եվրոպական հարեւանության վերանայված քաղաքականությունը պետք է քաջալերի այն երկրներին, որոնք իրական առաջընթաց են արձանագրում: «Մենք ուզում ենք ավելին տալ նրանց, ովքեր ավելին են անում այդ ուղղությամբ: Ըստ այդմ, որքան արագ են բարեփոխումները, որքան բաց է երկիրը՝ եվրոպական գործընթացների նկատմամբ, այնքան արագ պետք է լինեն Եվրոմիության արձագանքները»:

Արեւելյան գործընկերության մասնակից երկրներ Հայաստանից, Ադրբեջանից, Բելառուսից, Վրաստանից, Մոլդովայից եւ Ուկրաինայից սպասելիքները տարբեր են: Արեւելյան գործընկերության մասնակից երկրներից Բելառուսի հետ խորհրդարանական ձեւաչափում համագործակցության առումով առաջացած խնդիրները եւ արդեն իսկ գործադրվող որոշակի պատժամիջոցները եւս կարող էին մտահոգություն առաջացնել ԵՄ-ում: Սլովակիայի արտգործնախարարն, ի դեպ, հայտարարել է, թե պատրաստվում է ադրիլին նոր՝ տնտեսական պատժամիջոցներ ներկայացնել, եթե պաշտոնական Մինսկը մինչ այդ չդադարեցնի բռնությունները ընդդիմության նկատմամբ

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՖՈՒԿՈՒՇԻՄԱ-1»

Տագնապի առավելագույն մակարդակ Ճապոնիայում

«Ֆուկուշիմա-1» ատոմակայանի «անկանխատեսելի իրավիճակի» կապակցությամբ Ճապոնիայի կառավարությունը երկրում հայտարարել է տագնապի առավելագույն մակարդակ: Երեկ իշխանությունները հաստատել են այն երկյուղները, որ հովացման համակարգի խափանման պատճառով միջուկային վառելիքաձողերը մասամբ հալվել են: Այդ փաստը «կասկած չի հարուցում», հայտարարել է կառավարության գլխավոր քարտուղար Յուկիո Էդանոն: Հալչելուն վերաբերող տեղեկատվության հաստատումն է նաեւ ԱԷԿ-ի տարածքում պլուտոնիումի հայտնվելը, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Ռեակտորների հարկաբաժնից դուրս հայտնաբերվել է ռադիոակտիվ ջուր: Որոշ տվյալների համաձայն, արտահոսքը տեղի է ունեցել 2-րդ ռեակտորից: «Ճառագայթման աղբյուրը հավանաբար վառելիքաձողերն են, որոնք մասնակիորեն հալվել են եւ շփման մեջ մտել ռեակտորի հովացման նպատակով օգտագործված ջրի հետ», պարզաբանել է Յուկիո Էդանոն:

ԱԷԿ-ի օպերատոր Tokyo Electric Power (TEPCO) ընկերությունը հայտարարել է, որ ատոմակայանի տարածքում պլուտոնիում-238-ի պարունակությունը դեռ չի գերազանցում

այդ շրջանի բնական մակարդակը եւ կազմում է 1 կգ հողի հաշվով 0,54 բեկերել: Պլուտոնիումը հավանաբար արտազատվել է ԱԷԿ-ի միջուկային վառելիքից:

Իշխանությունները նշում են, որ անհրաժեշտ է հողի մեջ մշտապես ստուգել պլուտոնիումի մակարդակը, որպեսզի հնարավոր լինի դրա բարձրացման դեպքում միջոցներ ձեռնարկել: Կառավարությունում խոսում են TEPCO-ն ազգայնացնելու հնարավորության մասին, բայց տվյալ հարցում առայժմ միասնական կարծիք գոյություն չունի, նշում է Կիոդո գործակալությունը:

Սիրիայի կառավարությունը հրաժարական տվեց

Կալանվել է ցուցարարներին զենք բերող նավ

Սիրիայի կառավարությունը երեկ հրաժարական է տվել: Այդ մասին հայտարարել է նախագահ Բաշար Ասադը մայրաքաղաք Դամասկոսում իր աջակիցների կազմակերպած հանրահավաքի ժամանակ: Նախագահը խոսել է նաեւ իր խոստացած սահմանադրական բարեփոխումների եւ երկրում 1963-ից գործող արտակարգ դրությունը վերացնելու մտադրության մասին: Արտակարգ դրության վերացումը առաջին հերթին կհանգեցնի բանտերից հազարավոր կալանավորների արձակմանը: Վերջին օրերին Սիրիայի տարբեր քաղաքներում անցկացվող ցույցերի մասնակիցները պահանջում են նաեւ կաշառակերության վերացում, նոր աշխատատեղերի ստեղծում եւ այլն:

Իշխանությունները անկեղծորեն խոստովանել են ցուցարարների պահանջների «արդարացիությունը եւ օրինականությունը», միաժամանակ մերժելով «սադրիչ տարրերի գործողությունները», որոնք վտանգում են երկրի ներքին միասնականությունը:

Սիրիայի պետական հեռուստատեսությունը երեկ հաղորդեց, որ երկրի ծովուժը կալանել է ցուցարարներին զենք բերող մի նավ, որը մեկնել էր Լիբանանյան Տրիպոլի նավահանգստից: Սիրիայի իշխանությունները կարծում են, որ զենքն ուղարկել են արեւմտամետ «Ալ Մուստաքբալ» շարժման կողմնակիցները, որի առաջնորդը Լիբանանի վարչապետի պաշտոնակատար Սաադ Հարիրին է:

Շարժման մամլո ծառայությունը հերքել է սիրիական կողմի մեղադրանքները: Սաադ Հարիրիի կողմնակիցները 2005-ին Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության համար պատասխանատու են համարում Դամասկոսի իշխանություններին:

Դամասկոսում արդեն քանիերորդ անգամ փորձում են ապացուցել, որ ընդդիմության ելույթները հովանավորվում են արտերկրից: Մի քանի օր առաջ սիրիական հեռուստատեսությամբ ցուցադրվել էր Դամասկոսում ձերբակալված ամերիկացի ինժեներ Մուհամմեդ Ռադուանի այն «խոստովանությունը», որ նա կարող էր ունի Իսրայելի հատուկ ծառայությունների հետ:

«Ալ Ջազիրա» հեռուստաալիքը հաղորդում է, որ Բաշար Ասադի կողմնակիցների ցույց տեղի է ունեցել նաեւ Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում: Սիրիայի դեսպանատան առջեւ հավաքված ցուցարարները ծածանել են Սիրիայի եւ Լիբանանի դրոշներ, վանկարկել սիրիամետ կարգախոսներ:

Իրավապաշտպան կազմակերպությունների տվյալներով, Սիրիայի հարավում ընդդիմության ելույթների ճնշման ժամանակ երկրի ուժային կառույցների ներկայացուցիչների գործողությունների հետեւանքով սպանվել է 61 մարդ: Եվս 12 մարդ սպանվել է ծովափնյա Լաթաքիա քաղաքում:

Քադդաֆին ՆԱՏՕ-ին կոչ է անում դադարեցնել «բարբարոսական հարձակումը»

Օբաման Լիբիայում չի ծախսի 1 տրիլիոն դոլար

Լիբիայի ղեկավար Մուամմար Քադդաֆին հակալիբիական միջազգային կոալիցիայի մասնակից երկրների ղեկավարներին հղած նամակում կոչ է անում դադարեցնել «բարբարոսական հարձակումը»: Այդ մասին հաղորդում է Ֆրանսիայի գործակալությունը:

Լոնդոնում երեկ անցկացվում էր Լիբիայի իրադրությանը նվիրված գագաթաժողով 35 երկրների, այդ թվում՝ արաբական 7 պետությունների մասնակցությամբ: Հանդիպման մասնակիցներին հասցեագրած դիմումի մեջ Քադդաֆին ՆԱՏՕ-ի օդուժի հարվածները համեմատել է 2-րդ աշխարհամարտում Հիտլերի ձեռնարկած գործողությունների հետ:

ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձեւին համապատասխան ՆԱՏՕ-ն Լիբիայի վրա թռիչքազերծ գոտի է հաստատել, ինչպես նաեւ հարվածներ է հասցնում Քադդաֆիի զորքերի դիրքերին:

Նաեւ հաղորդվում է, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Վաշինգտոնում իր ելույթի ժամանակ հայտարարել է, թե Քադդաֆիին ռազմական միջոցներով տապալելը «կլիներ թանկարժեք սխալ»: Նախագահը հիշեցրել է, որ Իրաքում «վարչակարգի փոփոխումը տեւեց 8 տարի, հազարավոր կյանքեր եւ արժանապատիվ մոտ 1 տրիլիոն դոլար»: «Լիբիայում մենք չենք կարող թույլ տալ նման բաների կրկնություն», ընդգծել է Օբաման:

Նա հայտնել է, որ ԱՄՆ-ը Լիբիայում ռազմական գործողությունների լիակատար վերահսկողությունը ՆԱՏՕ-ին կփոխանցի մարտի 30-ին: Օբամայի խոսքերով, այդ փոփոխությունից հետո ամերիկացի հարկատուները Լիբիայի ռազմարշավի վրա զգալիորեն պակաս կծախսեն:

Լոնդոնում գործող «Միջազգային ներում» իրավապաշտպան կազմակերպության տվյալներով, Լիբիայում կորել են տասնյակ մարդիկ, այդ թվում՝ համաքաղաքացիական անձնական օրագրերի հեղինակներ, լրագրողներ, ընդդիմության ներկայացուցիչներ: Ենթադրվում է, որ նրանց բոլորին առեւանգել են Քադդաֆիին հավատարիմ մնացած ուժերը:

Անհետ կորածների հարազատների ու մերձավորների վկայությունների վրա հիմնվելով, իրավապաշտպան կազմակերպությունը փետրվարի սկզբից մինչեւ օրս արձանագրել է մարդկանց անհետացման երեք տասնյակ դեպք: Կորածների մեջ կան քաղաքական ակտիվիստներ եւ ապստամբներին աջակցելու մեջ կասկածվող այլախոհներ, այդ թվում՝ չորս դեռահաս:

ՌԴ-ում բնակչությունը նվազում է, Մոսկվայում՝ աճում

Մարդահամարի արդյունքները

ՌԴ վիճակագրությունը հրապարակել է 2010-ի հոկտեմբերին անցկացված մարդահամարի նախնական արդյունքները: Դրանք վկայում են, որ 2002-2010թթ. ռուսաստանցիների թիվը նվազել է 1,6 տոկոսով: Ըստ նախնական գնահատումների, ՌԴ բնակչությունը ներկայումս 142 մլն 905 հազար է, գրում է «Ռոսիյսկայա գազետա»:

2002-ի մարդահամարի տվյալներով, ՌԴ բնակչությունը 145,2 մլն էր եւ 1989-ի համեմատությամբ նվազել էր 1,8 միլիոնով:

Երկրի առավել խտաբնակ մասը կենտրոնական դաշնային օկրուգն է, որտեղ բնակչությունն աճել է 1,2 տոկոսով եւ կազմում է 38,4 միլիոն: Ամենամեծ աճը (6,3 տոկոս) արձանագրվել է հյուսիսկովկասյան դաշնային օկրուգում. այնտեղ ապրում է 9,49 մլն մարդ: Մյուս բոլոր տարածքներում բնակչությունը նվազել է, ամենաշատը (-6 տոկոս): Հեռավորարեւելյան դաշնային օկրուգում. այնտեղ ապրում է 6,29 մլն մարդ:

Քաղաքային եւ գյուղական բնակիչների հարաբերակցությունը 73,7 եւ 26,3 տոկոս է (2002-ին՝ 73,3 եւ 26,7 տոկոս):

2010-ին արական սեռի բնակիչները կազմել են 46,3 տոկոս, իգական սեռի բնակիչները՝ 53,7 տոկոս (2002-ին՝ 46,6 եւ 53,4 տոկոս):

Չնայած երկրի բնակչության կրճատմանը, Մոսկվայում 2002-2010 թթ. բնակչությունն աճել է 10,9 տոկոսով եւ հասել է 11 մլն 514 հազարի: Դա կազմում է երկրի բնակչության 8 տոկոսը:

Տարածքով առաջինը լինելով՝ Ռուսաստանը բնակչության թվով զբաղեցնում է աշխարհում 9-րդ տեղը: ՉԺՀ բնակչությունը 1,3 մլրդ է, Հնդկաստանինը՝ 1,2 մլրդ, ԱՄՆ-ինը՝ 310,4 մլն:

ՖՐԱՆՍԻԱ

Մեծարանք հայ մեծանուն շանսոնյեին

«Նուվել դ'Արմենի» ամսագրի 2011 թվականի մարտյան համարից քաղում ենք հետեւյալ տեղեկությունները հայ մեծանուն երգիչ, դերասան եւ հասարակական գործիչ Շառլ Ազնավուրի մասին:

Ֆրանսիայի Վալանս քաղաքի քաղաքապետարանը որոշում է կայացրել «Հայկական ժառանգության կենտրոնի» դիմաց գտնվող հրապարակը կոչել Շառլ Ազնավուրի անունով: Ներկայումս կատարվում են հրապարակի բարեկարգման աշխատանքները:

Իր հերթին Մոնտելիմարի քաղաքապետը քաղաքի շքանշանով է պարգեւատրել անզուգական շանսոնյեին: Պարգեւատրման արարողությանը հաջորդել է թիվ 7 ազգային մայրուղու հրապարակներից մեկը մի այլ հանրահայտ երգչի՝ Շառլ Տրենեի անունով կոչելու հանդիսությունը: Այդ առթիվ Ռոման-սյուր-իզեր քաղաքի հայազգի բնակիչ, ճանաչված քանդակագործ Թորոսը Ազնավուրին է նվիրել իր «Լա Դրոմ» (Ռոման-սյուր-իզեր եւ Մոնտելիմար քաղաքները գտնվում են Դրոմի դեպարտամենտում) քանդակի դրվագ ոսկեզօծ բրոնզե մի տանձ: Թորոսի հիշյալ «Լա Դրոմ» քանդակը տեղադրված է Սեն-Մարտեն ծառախիտ պողոտայում, հրապարակից ոչ հեռու եւ ներկայացնում է համանուն դեպարտամենտում աճող մրգերով լի մի սկուտեղ: Մոնտելիմար քաղաքում կազմակերպված սույն հանդիսությունը հովանավորել է քաղաքի «Հիշողություն եւ մշակույթ» հայկական ընկերակցությունը:

Հեսմիջօրեին Շառլ Ազնավուրը սիրով ու պատասխանատուորեն մակագրել է ներկաների ձեռքում գտնվող իր հրատարակած վերջին գիրքը:

Հիշեցնենք, որ ավելի վաղ՝ հունվարի 23-ին Փարիզի Շանզելիզե թատրոնում Ազնավուրը արժանացել էր Երուսաղեմի հրեական համալսարանի «Ակոպուս-2011» մրցանակին՝ որպես «մշակույթի մարդ եւ Հայ դատի մարտիկ» իր անցած փառապանծ ուղու համար: Մրցանակի հանձնման արարողության ժամանակ երգիչը խնդրել էր Իսրայելի իշխանություններին՝ ճանաչել 1915 թ. Հայոց ցեղասպանությունը:

Ֆրանսերենից թարգմանեց
ՏԻԳՐԱՆ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

Երիտասարդ հայ դերասան Օնիկ Կեցոյանը հունական բեմում

«Խայտաբղեղ թութակ» պիեսում արտացոլվում է գաղթականների կյանքը Աթենքում

Աթենք, «Հայաստան» լրատու, 26.03.2011: Փետրվարի 21-ից Աթենքի կենտրոնում բեմադրվում է մի համարձակ թատերական ներկայացում: «Սիներգիո» թատերարահում աղասանյալների եւ գաղթականների մերօրյա կյանքը բեմադրել է հույն ռեժիսոր Խրիստոս Usրեպկոսը: Ներկայացման մեջ գլխավոր դերում հանդես է գալիս հայ երիտասարդ դերասան Օնիկ Կեցոյանը:

Պիեսը ներկայացնում է երեք գաղթականների առօրյան, ովքեր էժան աշխատավարձի, ռասիզմի ու խտրականության, հանցագործության եւ գեստոյական կյանքի ամենօրյա գոյատեւման մեջ են:

Երեք գաղթականներին միացնողը մի խանութում վաճառվող խայտաբղեղ թութակն է, որի տերն էլ, պատահաբար, տեղացի մի հայ կին է՝ Մելինան:

Թատերական ներկայացումը շարունակվելու է մինչեւ Զատկի տոները:

Սալոնիկի միջազգային կինոփառատոն. հիմնախնդիրների կինոշարանք

Հունաստանի երկրորդ քաղաքում՝ Սալոնիկում, ավարտվեց վավերագրական կինոյի 13-րդ միջազգային կինոփառատոնը: Թեեւ հայ վավերագրական կինոն կինոարվեստի այն բնագավառն է, որտեղ շարունակվում են ստեղծվել այնպիսի արժեքներ, որոնք կարելի է պարզերես դուրս բերել միջազգային ասպարեզ, այս անգամ հայկական կինոն բացակայում էր Սալոնիկի փառատոնի ծրագրերից: Փոխարենը Հայաստան անունը տեղ գտավ կինոփառատոնի կատալոգում եւ մեկ անգամ հնչեց բեմից՝ ի դեմս Կինոոպերատորների եւ կինոլրագրողների միջազգային ընկերակցության դատակազմում առկա հայաստանցի անդամի՝ տողերիս հեղինակի, ով յոթ օրվա ընթացքում դիտեց 40-ից ավելի ֆիլմեր իր դանիացի, պորտուգալացի, իտալացի եւ հույն գործընկերների հետ մեկտեղ՝ ընկերակցության դիպլոմները շնորհելով մեկ միջազգային եւ մեկ տեղական կինոնկարի:

Վավերագրական կինոն մեծ մասամբ տվյալ ժամանակահատվածի հայելին է, սակայն այս տարվա փառատոնի վերտառությունը՝ «21-րդ դարի պատկերներ», միեւնույն է, ավելի քան ծեծված է հնչում: Մանավանդ որ որոշ ֆիլմերում ավելի շատ պատկերված էր նաեւ 20-րդ դարը, ինչպես՝ 1980-ականների վերջի, 1990-ականների սկզբի խորհրդային իրականությունը ներկայացնող ամերիկյան «Իմ պերեստրոյկան» (ռեժիսոր՝ Ռոբին Հեսման), քաղցկեղի դեմ մաքառելու նպատակով 1981-ին քայլարշավի ելած երիտասարդի մասին պատմող կանադական «Քամու դեմ»-ը (ռեժիսորներ՝ Էզրա Հոլանդ, Սթիվեն Նաշ) եւ այլն: «21-րդ դարի պատկերները» միանգամայն կարող էր փոխարինվել «Հիմնախնդիրների կինոշարան» խորագրով՝ ձեւավորելով մեր մոլորակի չափազանց մտահոգիչ եւ տխուր պատկերը: Քաղաքական, սոցիալական եւ անհատական ցավագին հիմնահարցեր, փախստականներ, անբուժելի հիվանդներ՝ ահա այսօրվա վավերագրական կինոյի հիմնական մոտիվները: Փառատոնի ֆիլմերով տողանցում են մերօրյա ճակատագրի եւ ժամանակի զոհերի այլազան դիմանկարներ: Կաթոլիկ քահանայի մանկապղծության զոհ երիտասարդ Խեսուսը (Ալեխանդրա Սանչեսի «Գառն աստծո», Մեխիկա-Ֆրանսիա), Աֆղանստանում անհասկանալի պայմաններում զոհված ամերիկյան մարզիկ զինվոր Փաթ Թիլմանը (Ամիր Բար Լեւի «Թիլմանի պատմությունը», ԱՄՆ), էկոլոգիական շարժման ահաբեկիչ պարագլուխ Դանիել Մքգովանը (Մարշալ Քարիի «Եթե ծառը ցած ընկնի. Երկրի ազատագրման ճակատի պատմությունը», ԱՄՆ) եւ շատ ուրիշներ մեր ժամանակների հանրային եւ քաղաքական կյանքի զոհերն են: Աղքատությունը սիրտդում է հնդիկ գյուղացիներին վաճառել իրենց մի երիկամը. նրանց բնակավայրը հայտնի է «Երիկամի գյուղ» անվամբ (Ռամա Ռաուի «Շուկան», Կանադա): Երիտասարդ աֆրիկուհիները պատմում են, թե ինչպես են իրենց մանուկ ժամանակ առեւանգել եւ դարձրել զինվոր՝ չմոռանալով ենթարկել նաեւ սեռական բռնության (Ռայմոնդ Պրովանշեի «Գրեյսը, Միլին, Լյուսին... երեխա զինվորները», Կանադա): Թվարկումը կարող ենք չշարունակել: Հատկանշական է, որ արդի վավերագրական կինոյում կինոխցիկը հաճախ խոստովանահոր դեր է կատարում, մարդիկ ազատորեն արտահայտվում են իրենց բաժին հասած փորձությունների մասին: Առօրյա կյանքում զուտ ֆինները իրենց ավանդական շոգեբաղնիքում մարմնի հետ մեկտեղ մերկացնում են նաեւ հոգին եւ պատմում իրենց հոգին կրծող տանջալից հիշողություններ՝ չամաչելով արցունքներից (Յոնաս Բերգհալի եւ Միկա Հոսակաինենի «Կյանքի գոլորշին», Ֆինլանդիա-Շվեդիա): Այս բավական հաջող փաստագրությունը որոշ չափով հիշեցնում է անցյալ տարի «Ոսկե ծիրան» կինոփառատոնում ցուցադրված ֆիննական «Ազգի հյուրասենյակը» կինոնկարը, իսկ որդեկորույս հոր պատմության դրվագը՝ Ջիմ Ջարմուշի «Գիշերը երկրի վրա» ֆիլմի վերջին՝ ֆիննական դրվագը:

Ասում են՝ «Իրավիճակը լուրջ է, սակայն ոչ անհույս»: Ցավոք, շատ ֆիլմերի դեպքում հասկանում ես, որ իրավիճակը թե՛ լուրջ է, թե՛ անհույս: Ցնցող է շվեդական «Անձնատուրություն» գիտահանրամատչելի ֆիլմը (ռեժիսոր՝ Ստեֆան Յառլ) մարդու օրգանիզմում առկա հարյուրավոր քիմիկատների մասին: 60 տարուց ավելի է, ինչ մարդիկ 150 հազարից ավելի քիմիկատներ են գործածում՝ առանց գիտակցելու, որ դրանք ծանրորեն ազդում են առողջության վրա: Ըստ վերջին հետազոտությունների՝ այդ քիմիկատներից շատերն անցնում են հղի մորից պտուղին, եւ այսօրվա նորածինը ծնվում է արդեն կիսով չափ նախաթունավորված: Շատ քիչ դեպքերում է, երբ ծանր նյութ ներկայացվելով հանդերձ՝ լույսի շող է մնում: Ուզում ես հավատալ, որ մկանային հիվանդություն ունեցող երիտասարդի հավաքած դրամը կավելանա, եւ նրա հիվանդության բուժումը կկիրառվի (Օդեթ Օրի «Բաբախող ժամանակ», Իսրայել): Որ հոգեկան խնդիրներ եւ անբուժելի հիվանդ երեխաների հետ իր յուրատեսակ մեթոդներով աշխատող կույր դասատուին կհաջողվի աղաքինել բոլորին (Նիկոլա Բելուչչիի «Հնչյուններ այգում», Շվեյցարիա):

Միջազգային ծրագրից կուզեինք առանձնացնել երեք աշխատանք: Բուլղարիայում հույն բեմադրիչ Սոֆյա Ջավելլայի նկարահանած «Դրախտ» հյուրանոցը» աշխույժ եղանակով ներկայացնում է գնչուներով բնակեցված լքված հյուրանոցն իր սոսկալի աղտոտությամբ եւ մեծ հույսերով ու ուրախություններով: Ինչպես վերջին տարիների բալկանյան կինոյում, այստեղ եւս զգալի է էմիր Կուստուրիցայի ազդեցությունը: Ֆիլիպ Գրաբսկիի «Մի տղան. տաս տարի Աֆղանստանում» ժապավենը մի աֆղան մանչուկի կյանքի տասնամյակի միջոցով հաջողապես տալիս է նրա երկրի ծանր իրականության լայնակտավ պատկերը: Խաղարկային կինոյի հետ միաձուլված Անդրիս Գաույայի «Ընտանեկան բնազդը» (Լատվիա) իր արտառոց կերպարների եւ աշխույժ գործողությունների շնորհիվ մեղմում է հարբեցողությամբ եւ արնաոգեղությամբ մեղանչող գավառական կյանքի դաժանությունը:

Փառատոնում բնականաբար մեծ թիվ էր կազմում հունական համայնապատկերը, որը, սակայն, բավական թույլ էր: Տնտեսական սուր ճգնաժամի մեջ գտնվող Հունաստանի համար հրատապ է դարձել գաղթականների խնդիրը, լինեն ալբանացի, պակիստանցի, հնդիկ եւ թե ամենատարբեր ազգերի (Աթանասիոս Կարանիկոլասի «Բարի գալուստ Եվրոպա»՝ այս թեմայով լավագույն աշխատանքը): «Կա՞ն որեւէ երջանիկ օտարերկրացիներ»,- հարցնում է Մարիա Պեսլիի «Ուրիշ կանանց պատմությունները» ֆիլմի հերոսուհիներից մեկը: Կարելի է եզրակացնել, որ վավերագրական կինոն երջանիկ հերոսների չի նախընտրում...

Փորձելով ամփոփել միջազգային վավերագրական կինոյից ստացված այս մեծ չափաբաժինը՝ սկսում ես մտածել, որ այն կարծես սպառել է թե՛ արտահայտչամիջոցները, թե՛ թեմաները: Ստեղծագործականության պակասը զգալի է, առկա է ընդհանուր ցավը՝ հեռուստահաղորդման ձեւաչափը («խոսող գլուխների»): Ֆիլմերի մեծ մասին բնորոշ է ձգձգվածությունը. տարածված հիվանդություն է՝ ափսոսում են ինչպես հարկն է մոնտաժել նկարահանված նյութը: (Բացառություն չէր նաեւ Թոմ Ջարմուշի՝ նշանավոր Ջիմ Ջարմուշի եղբոր «Երբեմն քաղաքը» Քլիվլենդի մասին, որի վերաբերյալ հույսերը չարդարացան): Արդյունքում չարաշահվում են հանդիսատեսի համբերությունը, ժամանակն ու նյարդերը: Բրամսն ասում էր, որ ինքը ստեղծագործելիս ավելի շատ ռետին է գործածել, քան մատիտ: Ցանկալի է, որ կինովավերագրողներն էլ կարողանան ավելի շատ «ռետին» գործածել եւ ավելի «անխնա» մոնտաժեն...

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ
Սալոնիկ-Երեւան

Այսօր Խաչատրյան թանգարանի բեմում վաղվա վառ անուններն են

Մարտի 30-ին Արամ Խաչատրյան թանգարանի համերգասրահում, իսկ 31-ին Դիլիջանի երաժշտական դպրոցներից մեկում երկու համերգով ելույթ կունենան երաժշտության ասպարեզում շնորհալի երեխաներին սատարող Բեռլինի միջազգային ակադեմիայի վեց պատանի սաներ: Համերգային ծրագրում ներառված են Սկարլատտիի, Բիբերի, Հարությունյանի, Սիբելիուսի, Շոպենի, Սեն-Սանսի, Դվորժակի, Շուբերտի, Բրամսի ստեղծագործությունները:

Նախաձեռնության հեղինակը 2008-ին հիմնադրված «Կամմերտոն» կազմակերպությունն է, որի բեռլինաբնակ նախագահ Լյուդմիլա ֆոն Բերգի եռանդուն ջանքերի շնորհիվ հնարավոր են դառնում պատանի երաժիշտների փոխայցերը, շփումները, տարբեր դահլիճներում ելույթ ունենալու առիթները: «Կամմերտոնի» նպատակն է խրախուսել Հայաստանում եւ նախկին ԽՍՀՄ երկրներում երաժշտության բնագավառում օժտված երեխաներին, հնարավորություն տալով նրանց նախ լավ ուսումնառություն ստանալ, այնուհետ ներկայանալ երաժշտասեր հանրությանը: «Կամմերտոնի» երեւանյան մասնաճյուղի հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հայ տաղանդավոր երեխաներից մի քանիսն այժմ ուսանում են Բեռլինում, ելույթ ունենում պրոֆեսիոնալ բեմերում, մասնակցում մրցույթների:

Գերմանիայից ժամանած պատանի երաժիշտները Երեւանում կհանդիպեն «Կամմերտոնի» անդամներին ու միացյալ փորձեր կանեն, առիթ կունենան ծանոթանալու նաեւ տեղի երաժիշտ մանկավարժների հետ: «Կամմերտոնի» նախապատրաստած հիշյալ այցն ու համերգները ֆինանսավորվել են Գյոթե ինստիտուտի, ԳԴՀ արտգործնախարարության, ՀՀ մշակույթի նախարարության կողմից: «Կամմերտոնի» գործունեությանը կանդրադառնանք առաջիկայում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Ռոման Բերեզովսկի. «Կարեւոր էր Ռուսաստանից գոլ բաց չթողնելը»

Ռուսաստանի հավաքականի հեռ ընտրական մրցախաղը 64-րդն էր Ռոման Բերեզովսկու համար ՀՀ ազգային ընտրանու կազմում: Այս ցուցանիշով նա շրջանցեց հավաքականի նախկին ավագ Հարություն Վարդանյանին եւ ընդգրկվեց բոլորից շատ խաղեր անցկացրած ֆուտբոլիստների լավագույն եռյակում: Նրանից ավելի շատ հանդիպումներ ազգային հավաքականում անցկացրել են միայն Սարգիս Հովսեփյանն (119) ու Արթուր Պետրոսյանը (69): Ընթացիկ մրցաշրջանը Բերեզովսկու համար 16-րդն է ազգային հավաքականում, որում փորձառու դարպասապահը նորամուտը նշել է 1996-ի օգոստոսի 31-ին Երեւանում Պորտուգալիայի հավաքականի հեռ ախտահի առաջնության ընտրական մրցախաղում: ՌԴ հավաքականի հեռ խաղում Բերեզովսկին 15-րդ անգամ դարպասն անառիկ պահեց, ինչը ռեկորդային ցուցանիշ է հավաքականում հանդես եկած դարպասապահների շրջանում:

ՌԴ հավաքականի հեռ հանդիպումից հետո Ռոման Բերեզովսկին պատասխանել է Gazeta.ru կայքի թղթակցի հարցերին, որոնք ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:

- Կարելի՞ է ասել, որ այս խաղը մարզական կարիերայիդ լավագույն հանդիպումներից էր:

- Ավելի դժվար խաղեր էլ են եղել: Անկեղծ ասած մենք պատրաստվում էինք այն բանին, որ Ռուսաստանի հավաքականը հենց խաղի սկզբից կսկսի ագրեսիվ գործել: Իսկ նրանք միայն առաջին խաղակեսի 2-րդ մասից սկսեցին ճնշում գործադրել մեր դարպասին: Դա մեզ մի փոքր նյարդայնացրեց, սկսեցինք սխալներ թույլ տալ պարզ իրադրություններում: Սակայն ընդմիջումից հետո կարողացանք հավասար պայքար մղել: Կարծում եմ, որ ոչնչով չզիջեցինք մրցակցին: Ընդհանուր առմամբ շատ ծանր խաղ ստացվեց: Ուրախ եմ, որ հաջողվեց դարպասն անառիկ պահել: Եվ ափսոս, որ 2-րդ խաղակեսում չհաջողվեց իրացնել գոլային պահերը:

- Ընդմիջմանը հանդերձարանում ինչպիսի՞ խոսակցություն տեղի ունեցավ:

- Առաջին հերթին մարզիչը կոչ արեց մեզ հավասալ սեփական ուժերին:

- Հայաստանի հավաքականը հաջորդ փուլ մտնելու հնարավորությունները պահպանո՞ւմ է:

- Մենք չենք պարտվել, այնպես որ հնարավորությունները պահպանվում են:

- Ռուսներից ո՞վ ավելի շատ խնդիրներ առաջադրեց ձեզ:

- Դժվար է ասել: Ժիրկովն էր աչքի ընկնում: Ընդհանրապես արտերկրում հանդես եկող ՌԴ հավաքականի ֆուտբոլիստներն ավելի լավ խաղացին:

- Ինչպե՞ս կգնահատես ՀՀ հավաքականի պաշտպանների գործողությունները:

- Գերազանց:

- Ո՞վ էր հաղթանակին ավելի մոտ:

- Երկրորդ խաղակեսում մենք գոլ խփելու հիանալի հնարավորություն ունեինք, իսկ առաջին խաղակեսում ռուսները մի քանի վտանգավոր պահեր ստեղծեցին: Ընդհանուր առմամբ խաղի արդյունքն օրինաչափ է:

- Ընտրական 2-րդ խմբի թիմերից ո՞րն է քո վրա ավելի մեծ տպավորություն թողել:

- Խաղի կազմակերպման առումով ՌԴ հավաքականն ամենաբարձրակարգն է: Իսկ մակեդոնացիները շատ լավ խաղ ցուցադրեցին առաջին 60 րոպեներին, շատ ագրեսիվ էին գործում:

- Մոսկվայում կայանալիք պատասխան հանդիպումը վճռորո՞շ է լինելու:

- Վճռորոշ խաղերից մեկը կլինի: Չէ՞ որ բացի այդ խաղից, մենք դեռեւս չորս հանդիպում պետք է անցկացնենք: Անդորրայի հավաքականը բացահայտ հետնապահն է, իսկ մյուս հավաքականները կարող են միավորներ կորցնել այլ խաղերում:

- Ինչպե՞ս ես վերաբերվում այն կարծիքին, թե Հայաստանի հավաքականը սեփական դաշտի թիմ է:

- Ճիշտ է, մեզ ավելի հեշտ է սեփական հարկի տակ խաղալը, որտեղ երկրպագուների աջակցությունն էլ իր դրական ազդեցությունն ունի: Բացի այդ, ժամանելով Երեւան, մրցակիցները չեն հասցնում վարժվել մեր կլիմայական պայմաններին: Ես դա իմ վրա էլ եմ զգացել: Այստեղ գնդակն ավելի արագ է թռչում: Բարձրադիր գոտու ազդեցությունը զգացվում է:

Ամերիկացի միլիոնատերը ցանկանում է գնել «Ռոման»

Ամերիկացի միլիոնատեր Թոմաս Դիբենեդետոն ժամանել է Հռոմ, որտեղ մտադիր է ավարտել «Ռոման» գնելու բանակցությունները: Սպասվում է, որ գործարքի գինը կկազմի 77 մլն եվրո: Դիբենեդետոն «Ռոմայի» ջերմ երկրպագու է, սովորել է Հռոմում եւ շատ է սիրում այդ խաղաքը:

«Ռոմայի» նոր սեփականատիրոջ հարցը վաղուց է ծագել, սակայն այն առայժմ լուծում չի ստանում: Ակումբը գնելու ցանկություն են ունեցել նաեւ ռուսական բիզնեսի ներկայացուցիչները: Դեռեւս 2004-ին ռուսաստանցի միլիարդատեր, ներկայումս «Անժիի» սեփականատեր Սուլեյման Քերիմովը մտադիր էր 400 մլն եվրոյով գնել ակումբը՝ մարելով նաեւ 250 մլն եվրոյի պարտքը: Սակայն հետագայում նա հրաժարվեց այդ մտքից, քանի որ պարզվեց, որ «Ռոմայի» պարտքը մի քանի անգամ գերազանցում է նշված գումարը:

2009-ի օգոստոսին «Ռոմայով» հետաքրքրվում էր ՕՆԷԿՍԻՄ խմբի ղեկավար Միխայիլ Պրոխորովը, որը մտադիր էր ակումբը գնել 250 մլն եվրոյով, 80 մլն եվրո էլ ծախսել ֆուտբոլիստների գնման վրա: Իտալական լրատվամիջոցների տեղեկացմամբ նույնիսկ ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը կողմ էր այդ գործարքին:

Ինչպես երեւում է, այս անգամ «Ռոմայի» վաճառքի հարցը դրական լուծում կստանա: Ի դեպ, ակումբի ներկայիս սեփականատեր Սենսիի ընտանիքն այլեւս չի զբաղվում թիմի վաճառքի հարցով: Այդ բեռն իր վրա է վերցրել «Յունիկրեդիտ» բանկը, որն անցյալ տարի ակումբի 325 մլն եվրո պարտքի դիմաց ստացել է բաժնետոմսերի 49 տոկոսը: «Ռոման» գնելու ցանկություն ունեցող 5 թեկնածուներից բանկն ընտրել էր Դիբինեդետոյին, որը ներկայացնում էր Բոստոնում բնակվող 13 գործարարներից կազմավորված խոշոր ընկերություն:

«Նրանք իմ գործընկերներն են: «Բոլտոն Սելթիկսի» համասեփականատեր Ջեյմս Պալոտան արդեն գնահատել է «Ռոմայի» ներուժը, նա հիանալի է հասկանում սպորտը: Մայքլ Ռուանը կգբաղվի նոր մարզադաշտի շինարարության հարցերով», նշել է Դիբենեդետոն, որը «Բոստոն Ռեդ Սոկսի» համասեփականատերն է:

Ամերիկացի գործարարը պատրաստ է նաեւ մարել «Ռոմայի» 40 մլն եվրոյի պարտքը, ինչպես նաեւ ամռան տրանսֆերային շրջանում 5-6 նոր ֆուտբոլիստներ գնել:

Դիբենեդետոն երազում է, որ «Ռոման» դառնա աշխարհի ուժեղագույն ակումբներից մեկը, մշտապես նվաճի Իտալիայի չեմպիոնի տիտղոսը, մրցունակ լինի չեմպիոնների լիգայի մրցաշարում:

Եթե գործարքը տեղի ունենա, ապա Դիբինեդետոն ու նրա գործընկերները կդառնան իտալական ֆուտբոլի պատմության մեջ օտարերկրացի 2-րդ սեփականատերերը: Առաջինը ռուսաստանցի Յուրի Կորաբլինն է, որին է պատկանում «Վենեցիա» ակումբը:

Ռուս գործարարները պատրաստ են ֆինանսավորել «Սպորտինգին»

Ռուսաստանցի մի խումբ գործարարներ պատրաստ են 50 մլն եվրոյի ներդրում կատարել Լիսաբոնի «Սպորտինգում», եթե ակումբի նախագահ ընտրվի Բրունու դե Կարվալյուն: Պորտուգալացի գործարարը վաղուց է համագործակցում ռուսաստանցի իր գործընկերներ հետ:

Հարցի դրական լուծման դեպքում ՌԴ ԱՕԿ-ի նախկին նախագահ Լեոնիդ Տյագաչովի ու 1991-2000-ին Չուկոտկայի նահանգապետի պաշտոնը զբաղեցրած Ալեքսանդր Նազարովի մասնակցությամբ հատուկ հիմնադրամ կստեղծվի: Ներկայումս «Սպորտինգի» նախագահի պաշտոնին հավակնում են 5 հոգի: Նրանցից մեկը՝ Պեդրու Բալթազարը Բրունու դե Կարվալյուին մեղադրել է ռուսական մաֆիայի «կեղտոտ» փողերը «Սպորտինգի» միջոցով լվանալու մեջ:

ՍԱՄԲՈ

Ատոմ Դանիելյանն արժանացավ արծաթե մեդալի

Հայաստանցի 4 սամբիստներ մասնակցեցին Մոսկվայում անցկացված աշխարհի Սուպերգավաթի խաղարկությանը: Մեր սամբիստներից առավել հաջող ելույթ ունեցավ ստեփանակերտցի Ատոմ Դանիելյանը: 26-ամյա անվանի սամբիստը հաղթելով բոլոր մրցակիցներին, մտավ եզրափակիչ: Այստեղ նրա մրցակիցը բելառուսցի Պոպովն էր: Հայ մարզիկը մի փոքր վնասվածք ուներ, որն էլ խանգարեց նրան հաղթող ճանաչվել նաեւ վճռորոշ գոտեմարտում: Դանիելյանը ստիպված էր բավարարվել արծաթե մեդալով:

ՌԴ հավաքականի կազմում հաջող ելույթ ունեցավ Գայանե Հարությունյանը: Մինչեւ 48 կգ քաշային կարգում հայ մարզուհին եզրափակիչ գոտեմարտում պարտվեց Ելենա Բոնդարեւային:

Առանց հաղթանակի

Ֆրանսիայում ընթացող շախմատի Եվրոպայի առաջնության 7-րդ տուրն այնքան էլ հաջող չդասավորվեց հայաստանցի շախմատիստների համար: Մեր 9 շախմատիստներից եւ ոչ մեկին չհաջողվեց հաղթանակ տոնել: Ճիշտ է, նրանցից վեցը պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին Վլադիմիր Հակոբյանն ու Յանիկ Պելետիեն, Դիմիտրիոս Մատսրովասիլիսն ու Գաբրիել Սարգսյանը, Սամվել Տեր-Սահակյանն ու Բորիս Գրաչովը, Արման Փաշիկյանն ու Մաթիե Կորնետը, Մուսաֆա Յիլմազն ու Զավեն Անդրեասյանը, Զովանկա Հոուսկան եւ Ռոբերտ Հովհաննիսյանը:

Ավետիք Գրիգորյանը սեւերով պարտվեց Դմիտրի Յակովենկոյին, Հրան Մելքումյանն էլ սպիտակներով զիջեց Լուկ Մակբեյնին: Վլադիմիր Պողոսյանը 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց՝ զիջելով Մուսաֆա Ելկենին:

Մրցաշարի միանձնյա առաջատար Վլադիմիր Պոտկինը պահպանեց իր դիրքը: Նա ոչ-ոքի խաղաց Անդրեյ Վոլոկիտինի հետ ու վաստակեց 6 միավոր: 19 շախմատիստներ 5,5 միավորով հետապնդում են Պոտկինին: 5 միավոր ունեցող շախմատիստների թվում է ֆրանսահայ Տիգրան Ղարամյանը, որը հաշտություն կնքեց ադրբեջանցի Ղադիր Հուսեյնովի հետ: Հայաստանցի շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Գաբրիել Սարգսյանը, Վլադիմիր Հակոբյանը, Արման Փաշիկյանն ու Սամվել Տեր-Սահակյանը, որոնք վաստակել են 4,5-ական միավոր: Մրցաշարի ավարտին դեռ 4 տուր կա:

Եզրափակեցին աղյուսակը

Հանդբոլի Հայաստանի մինչեւ 17 տարեկանների աղջիկների հավաքականն անհաջող ելույթներ ունեցավ Ռումինիայի Յասի քաղաքում անցկացված Եվրոպայի պատանեկան առաջնության ընտրական մրցաշարում: Մեր հանդբոլիստուհիները խոշոր հաշիվներով պարտվեցին Հոլանդիայի (9-54), Ռումինիայի (13-57) եւ Իսրայելի (7-26) հավաքականներին ու խմբում եզրափակեցին աղյուսակը: Առաջին տեղը գրավեցին ռումինացիները, որոնք հաղթեցին նաեւ մյուս մրցակիցներին (Հոլանդիա՝ 27-21, Իսրայել՝ 41-10):

Դրո՛ւժբա...

Ուռռա՜ հայրենակիցներ, ցնծացեք, չէ՞ որ մենք հաղթել ենք Ռուսաստանի ֆուտբոլի հավաքականին: Չե՞նք հաղթել... ինչպես թե... չէ՞ որ այդպես պնդում էր առաջին ալիքը: Հաղորդավար, հաղորդավարուհի շողոմ ժպիտը շուրթերին ավետեցին այդ անհավանական փաստը:

Հաղթեցինք, այո՛, որովհետեւ այդպես էր կարգադրել ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ, արժանավոր Ռուբեն Հայրապետյանը:

Ո՛չ, ի՞նչ եք ասում, նա չի սխալվել... հաղթել է դրուժբան... Օ՜ այդ սուրբ բառը, որ մեզ ուղեկցել էր սովետի ողջ ժամանակաշրջանում, ուղղակի թեւ ու թիկունք էր: Մենք կատարում, գերակատարում էինք... այդ սուրբ բառը ամենուրեք էր մեզանում՝ շենքերի ճակատին, գնացքների վրա, հուշանվերների վրա: Բայց ափսոս, որ քաղբյուրոն միայն մի բանի տեղ էր դնում մեր սիրելի «դրուժբա»: Թուրքերը ամռանը զավթում էին Սիսիանի սարերը, վրացիները խժռում մեր մշակույթը, միեւնույն է՝ մենք միշտ աղաղակում էինք՝ դրուժբա՜-ա՜...

Դա՞ է գրված մեր ճակատին... ֆուտբոլում էլ կարող ենք պարտվել, բայց կհաղթի դրուժբան եւ չնայած ռուսների անատամ խաղին, մենք հաղթել ենք, քանի որ մեր ֆուտբոլը ղեկավարում է ամենահայտնի Ռուբեն Հայրապետյանը... սպասենք հաջորդ «հաղթանակին»:

ՌՈՒԲԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ

«Ֆորմուլա-1»-ի մեկնարկը տրվեց Մելբուռնում

Ավստրալիայի Գրան պրիի խաղարկությամբ մեկնարկեց «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի հերթական առաջնությունը: Երկար տարիներ հենց այս մրցաշարով էր սկսվում «Ֆորմուլա-1»-ը: Սակայն 2006-ից սկսած աշխարհի առաջնության մեկնարկը տրվում էր Բահրեյնի Գրան պրիի խաղարկությամբ: Սակայն այդ երկրի ներքաղաքական լարված իրավիճակի հետեւանքով այս տարի մրցումները Բահրեյնում չանցկացվեցին:

Մրցաշրջանի առաջին մրցման ժամանակ իր երկրպագուներին հաճելի անակնկալ մատուցեց ռուս ավտոտարավորդ Վիտալի Պետրովը, որն առաջին անգամ բարձրացավ պատվո պատվանդան՝ զբաղեցնելով 3-րդ տեղը: Իսկ հաղթող ճանաչվեց «Ռեդ Բուլի» ավտոտարավորդ Սեբաստիան Ֆեթելը: 2-րդ տեղը գրավեց Լյուիս Հեմիլտոնը («Մակլարեն»):

Առաջին փուլից հետո մրցաշարային աղյուսակը 25 միավորով գլխավորեց Սեբաստիան Ֆեթելը: 18 միավոր ունի Լյուիս Հեմիլտոնը, 15՝ Վիտալի Պետրովը:

«Կոնստրուկտորների գավաթի» խաղարկությունում 35 միավորով առաջատարը «Ռեդ Բուլն» է: 26 միավոր է վաստակել «Մակլարենը»: 18 միավորով լավագույն եռյակը եզրափակում է «Ֆերարին»:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Երկու ավտոբուս

Երբ 2008-ի օգոստոսյան վրացական պատերազմից հետո տեւական ժամանակով փակվեց Վրաստանից Ռուսաստան տանող ճանապարհը, անկեղծորեն ուրախացա: Հասկանալի է, թե ինչ նշանակություն, արժեք ունի այդ ճանապարհը մեր շրջափակված երկրի համար, տեսանելի էին նաեւ Հայաստան-Ռուսաստան նվազող ապրանքաշրջանառության թվերը, սակայն այս ամենը, հաշվի առնելով էլ Հայաստանից Ռուսաստան տանող փակված ճանապարհը, ուրախալի էր, եւ ահա, թե ինչու: Պարզապես ամեն շաբաթ սփոփված չէինք լինում տեսնել հաստատես մարզային ավտոկայաններում սարսափելի մի պատկեր. մարդիկ ընտանիքներով, կապոցներով, հուսալքության մեծ «պաբարով» հեռանում են Ռուսաստան:

Այժմ «հարմարավետ ավտոբուսները» «ընդամենը մի քանի օրում» մեզանից շատերին կրկին տանում են այդ ճանապարհով, ոմանց՝ անվերադարձ:

Ինչպես նշում են հարեւան Ադրբեջանի որոշ ոչ իշխանական լրատվամիջոցներ՝ Ադրբեջանում նույնպես նույն պատկերն է. մի տարբերությամբ, որ Ադրբեջան-Ռուսաստան սահմանը երբեք չի փակվել, բացի սրանից՝ ադրբեջանցիներից ոմանք ընտրում են նաեւ Իրանի ճանապարհը, ոմանք՝ անվերադարձ: Թե ի՞նչ պատճառով են հակամարտ Հայաստանն ու Ադրբեջանը լիում համապատասխանաբար հայերն ու ադրբեջանցիները, եւ դեռ որքա՞ն այս ամենը պետք է շարունակվի, կարծում ենք, գաղտնիք չէ եւ քննարկման այլ թեմա է: Շատ ավելի հետաքրքրական է, թե ի՞նչ կլինի, երբ երկու ավտոբուս, մեկը՝ Ադրբեջանից, մյուսը՝ Հայաստանից, ռուսական ճանապարհին հանկարծ հանդիպեն մի բնակավայրում, երբ երկուսն էլ կանգ առնեն, ասենք՝ լիցքավորվելու կամ հանգստանալու: Սոտավորապես նման պատկերի կարելի է հանդիպել նաեւ որեւէ «երրորդ երկրի» օդանավակայանում, երբ Բաքվից եւ Երեւանից ժամանող թռիչքները ժամերով համընկնում են: Երբ ուղեւորները տեղեկանում են միմյանց հասցեների մասին, սկսվում է բավական ուշագրավ մի երեւույթ. սառը, բայց միեւնույն ժամանակ՝ խիստ «տաք» հայացքներ, ոմանք նույնիսկ երեխաներին փորձում են որոշակիորեն հեռու պահել «դիմացի խմբից»: Այս ամենին զուգահեռ անհնար է հայերի ու ադրբեջանցիների հայացքների մեջ չտեսնել փոխադարձ հետաքրքրություն, հատկապես տարիքով ավելի մեծերի, զրուցելու, թեկուզ բանավիճելու, մի ընդհանուր խոսքով՝ շփվելու ցանկություն:

«Ես Դաշքեսանից եմ, ես էլ»

42-ամյա **Հայկ Մամիկոնյանը՝** Աբովյան քաղաքից, այնպես էլ չկարողացավ, իր խոսքերով, «նորմալ աշխատանք» գտնել հայրենիքում: Ավարտած լինելով նախկին Պոլիտեխնիկը, Հայկը սկզբում աշխատել է քաղաքի գործարաններից մեկում, այնուհետեւ՝ վերջինի փակումից հետո, մնացել անգործ: Զբաղվել է առեւտրով, շինարարությամբ եւ այլն: Վերջերս էլ, «որեւէ հեռանկար չտեսնելով Հայաստանում», որոշել էր մեկնել Ռուսաստան՝ եղբոր մոտ, Կրասնոդար: Հայկը նախատեսում է այնտեղ «հարմարվելուց» հետո տեղափոխել նաեւ ընտանիքը՝ դպրոցահասակ երկու որդիներին: Անհրաժեշտ գումար չունենալու պատճառով Հայկը որոշեց ավտոբուսով մեկնել, եւ Վրաստանի սահմանը նոր անցած, դեռ ճանապարհին, նրանց ավտոբուսը կանգ առավ՝ «նույն իրենցի նման մեկ այլ ավտոբուսի կողքին». որոշ ժամանակ անց միայն, ծխելու համար մի փոքր հեռու գնացած տղամարդիկ մյուս ավտոբուսի վրա կարդացին՝ «Բաքու-Կրասնոդար»: Հենց այս վերջինից էլ իջավ Ռուսաստ Բաբաեւը՝ կրկին 40-ն անց եւ կրկին, ինչպես հետագայում պարզվեց, Կրասնոդար՝ եղբոր մոտ մեկնող, այնուհետեւ ընտանիքին տեղափոխելու մտադրությամբ: Երբ Ռուսաստն իջնում էր, Հայկն արդեն գիտեր, որ դա Բաքվի ավտոբուսն է, եւ երբ ադրբեջանցին կրակ ուզելու ցանկությամբ դիմեց Հայկին, վերջինս հեգնական ժպիտով, մի քանի վայրկյան «դիմամբ» ուշացնելով միայն վառեց դիմացինի սիգարետը: Իսկ երբ Ռուսաստն ասաց հետեւյալ բառերը՝ «Տունս Դաշքեսանում թողած, ընկա ռուսի երկիր...», Հայկն այլեւս չկարողացավ իրեն զսպել. «Դաշքեսանի՞ց ես», «Այո», պատասխանեց Ռուսաստը: «Ես էլ», ծանր հոգոց հանելով ավելացրեց Հայկը: Զրուցակիցները մի քանի վայրկյան լուռ նայեցին իրար, եւ միայն այդ ժամանակ ադրբեջանցու հայաքը ընկավ իրենց ավտոբուսի հետեւում կանգնած ավտոբուսի ցուցանակին՝ «Երեւան-Կրասնոդար». մի քանի րոպե երկուսն էլ լուռ էին... Մեկ-երկու բառ փոխանակեցին հետո, եւ միայն վերջում, երբ երկու վարորդները հրահանգեցին վերադառնալ ավտոբուս, Հայկը հեռացող Ռուսաստի հետեւից հավելեց. «Ամեն ինչ նո՞ւյնն է Դաշքեսանում, ի՞նչ նորություն կա...», «Ամեն ինչ լավ է, պարում ենք...», ոչ կոպիտ, այլ ժպիտով պատասխանեց ադրբեջանցին:

Մամիկոնյան Հայկը շենքում մեր հարեւանն է, եւ այս ամենի մասին տեղակացանք նրա հետ հեռախոսազրույցի ժամանակ: Տեղեկացանք նաեւ, որ Կրասնոդարի մերձակա փոքրիկ բնակավայրերից մեկում գոյություն ունի խանութ՝ «Դաշքեսան» անունով. խանութում այժմ աշխատում են Հայկն ու Ռուսաստը, իսկ սեփականատերերն են նրանց եղբայրները: «Մենք գտել են ձեզը. երբեք չենք խոսում, թե ո՞ւմ է պատկանում Դաշքեսանը, հայրենիքի մասին խոսելիս միշտ օգտագործում ենք «մեր...» բառը», հեռախոսով ասաց Հայկը՝ հավելելով, որ ընդամենը երկու օր առաջ չորս դաշքեսանցիներով վայելում էին հենց այնտեղից ուղարկված ընտիր գինին... Շուտով Կրասնոդար կտեղափոխվեն մեր հարեւան Մամիկոնյանները, ինչպես նաեւ Բաբաեւները՝ Ադրբեջանից: Իսկ մինչ այդ ռուսական քաղաքում միասին դպրոց, դպրոցից տուն, ինչպես նաեւ ֆուտբոլի են գնում եւ բակում խաղում Հայկի ու Ռուսաստի եղբորորդիները:

«Ադրբեջանցիների հետ հավաքվում ենք ընտանիքներով...»

Ոչ միայն Մամիկոնյաններն ու Բաբաեւները, այլեւ ամբողջ Լիոեցկ քաղաքի հայկական եւ ադրբեջանական համայնքների ներկայացուցիչները հաճախակի են հանդիպում: Ինչպես օրեր առաջ ռուսական այդ քաղաքի պատշոնական կայք gorod48. ru-ին հաղորդել էր Ռուսաստանի հայերի միության Լիոեցկի բաժանմունքի ղեկավար **Վլադիմիր Մալխասյանը**, քաղաքի հայկական, ադրբեջանական եւ հրեական համայնքները միավորվել եւ ստեղծել են մեկ կազմակերպություն. «Ներկա դժվարին իրավիճակում, երբ հաճախակի հարցեր են առաջանում հենց միջէթնիկական հողի վրա, մենք լավ ենք հասկանում, որ անհրաժեշտ է ավելի լավ միմյանց ճանաչել, ծանոթանալ միմյանց մշակույթին, սովորություններին: Այս կապակցությամբ մենք անգամ ընտանիքներով հավաքվում ենք ադրբեջանցիների եւ հրեաների հետ, կազմակերպում ենք ազգային մշակույթի օրեր, փառատոներ, ֆուտբոլային հանդիպումներ: Մեր այս նախաձեռնությունը ողջունեց քաղաքի իշխանությունը եւ այժմ Լիոեցկում ցանկանում ենք ստեղծել «Ազգությունների տուն», որտեղ կմտնեն մեր երեք համայնքները, ինչպես նաեւ բոլոր այլ ցանկացողները: Հիմա ձեւակերպում ենք համապատասխան փաստաթղթերը: Սկզբի համար, կարծում եմ, մեզ կբավարարի մեկ սենյակը, հետո արդեն նախատեսում ենք վարձակալել շինություն, որտեղ հնարավոր կլինի անցկացնել տարբեր ազգությունների մշակութային եւ ավանդական միջոցառումներ», gorod48.ru-ին նշել է Մալխասյանը: Իսկ որպես առաջին համատեղ ակցիա՝ Լիոեցկի հայերը, ադրբեջանցիները եւ հրեաները արդեն իսկ հանդես են եկել ծառատունկով:

«Նույն հայերն ու ադրբեջանցիները»

Միայն այս մարտի ընթացքում շփման գոտում հայկական կողմը «հակառակորդի արձակած դիպուկահար կրակից» տվել է երեք զոհ: Ինչպես նշում են ադրբեջանական լրատվամիջոցները՝ «հայ դիպուկահարների կրակից զոհվել են երկու ադրբեջանցի զինծառայողներ եւ մեկ քաղաքացիական անձ՝ երեխա...», ՀՀ ՊՆ-ից եւ ԼՂՀ ՊԲ-ից այս վերջին տեղեկությունը հերքում են՝ այն մասով, որ ադրբեջանցիների մահվան պատճառը հայ դիպուկահարների կրակն է, քանի որ «հայկական կողմը խստորեն պահպանում է հրադադարի ռեժիմը»: Ադրբեջանում դեռ պահվում են մի քանի հայ ռազմագերիներ, այդ թվում՝ մեկ հայ ընտանիք, որին, կրկին ադրբեջանական լրատվամիջոցների եւ Կարմիր խաչի Բաքվի գրասենյակի պնդմամբ, հարեւան երկրում տրվել է կեցության իրավունք: Ամեն օրվա վերջի լրահոսում, որպես կանոն, հայտնում են՝ ադրբեջանական կողմը խախտել է զինադադարը», նույնը՝ «ադրբեջանական կողմ»-ի փոխարեն «հայկական կողմ» ձեւակերպմամբ, նշում են ադրբեջանական լրատվամիջոցները: Մինսկի խմբի համանախագահները հրապարակում են զեկույցը զեկույցի եւ հայտարարությունը հայտարարության հետեւից, որոնց բառապաշարը լիարժեքորեն չի բավարարում հակամարտ կողմերից եւ ոչ մեկին: Որքանո՞վ եք կարեւորություն տալիս այդ հայտարարություններին, հարցնում եմ Մամիկոնյան Հայկին, խնդրելով հարցս փոխանցել նաեւ Ռուսաստ Բաբաեւին. «Կարծում եմ՝ հարցը պետք է լուծեն, եւ կարող են լուծել միայն հայերն ու ադրբեջանցիները՝ ինքնուրույն», ասաց Հայկը, որին Ռուսաստը հավելեց միայն մեկ բան. «Մարդիկ պետք է վերադառնան իրենց տները, մարդիկ՝ անկախ ազգությունից»:

Հայ-ադրբեջանական կապերը նույնքան բազմաթիվ են, որքան հայ-ադրբեջանական ռազմական բախումները կամ բանավիճելու թեմաները: Եվ իրոք, որքան էլ Մինսկի խումբը «ԼՂ-ի հարակից ադրբեջանական 7 շրջաններ» անվանի ազատագրված տարածքները, որքան էլ Ստեփանակերտը խանքենդի կոչվի, եւ որքան էլ երկար Աղդամը մնա ավերակ քաղաք, հայ-ադրբեջանական հիմնահարցը՝ արմատական առումով կարող են լուծել միայն «երկու ավտոբուսները» կամ «երկու հոգի»՝ 70-ամյա Վարազադաս պապը, որը թողել է իր տնկած ծառերը Շահումյանում, եւ նույն տարիքի Զեմալ պապը, որը տնկած ծառեր ունի Քարվաճառում... մնացած որեւէ լուծում կլինի բացառապես ժամանակավոր:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

Սիմեդ Դավութօղլուի համար հայկական սփյուռքը համարվում է Թուրքիայի «դիասպորան»...

1-ին էջից

- Դոկտ. Դավութօղլու, ես ցանկանում եմ, լինելով հայ, կրկնել այն հարցը, որը Ձեզ է տվել, ինչպես ինքներդ ասացիք քիչ առաջ, իմ հայրենակիցներից մեկը վերջերս. ի՞նչ ճակատագիր է սպասում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ ստորագրված արձանագրություններին: Միայն ավելացնեմ իմ կողմից, որ Հայաստանում այլեւս ոչ ոք չի հավատում, որ Ձեր Բեյուկ Մեջլիսը (խորհրդարան) երբեւիցե կվավերացնի այն:

- Պրն Հակոբ Ավետիքյան, բարեկամս, ասեմ, որ մենք հայկական կողմի հետ Պրոտոկոլների վրա աշխատում էինք 3 տարի շարունակ: Իրականության մեջ մեր եւ Հայաստանի միջեւ շփումներն սկսվել են 2005 թ.-ից, երբ մեր կառավարությունը հայտարարեց դեպի ողջ աշխարհը իր բացվածության, «Հարեւանների հետ զրո պրոբլեմ» ունենալու իր քաղաքականության մասին:

Իսկության մեջ հայկական կողմի հետ մեր բանակցությունները հետաքրքրում էին 3 նպատակ՝

1) բացելով սահմանը եւ հաստատելով դիվանագիտական հարաբերություններ՝ ստեղծել ուղղակի եւ անուղղակի հարաբերություններ՝

2) Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ, եւ՝

3) թուրքերի եւ հայերի միջեւ: Այստեղ ես նկատի ունեմ Սփյուռքի հայերին, որոնց մենք նկատում ենք մե՛ր Դիասպորան (Սփյուռք), քանզի նրանք Թուրքիայից են արտագաղթել (անգլերեն խոսքում այս՝ անմե՞ղ եւ խիստ դաժան բառը հնչեց immigrated արտահայտությամբ-Հ. Ա.) Ամերիկա, Ֆրանսիա... (Ահա թե ինչու) մենք վերջերս այստեղ հանդիպում ունեցանք Պարսամյանի հետ (նկատի ունի Հայ եկեղեցու Մ. Նահանգների Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանին-Ա. Հ.):

Շատերը կարծում են, որ Պրոտոկոլները պարզապես սահմանի բացում եւ դիվանագիտական հարաբերությունների հաստատում են նշանակում: Մինչդեռ Պրոտոկոլների մեջ կան հաշտեցման (օգտագործվեց reconsiliation արտահայտությունը-Հ. Ա.) եւ պատմական հարցերը լուծելու մասին նախատեսում նաեւ: Այլ խոսքով, մենք (հայկական կողմի հետ) մի ամբողջ շարք հարցեր ենք քննարկել եւ համաձայնության եկել:

Նրանք, հայերը, կարծում են, որ հարաբերությունների նորմալացումը պարզապես սահմանի բացմամբ եւ դիվանագիտական հարաբերություններով է պայմանավորվում: Այնինչ մենք շատ մեծ փորձ ունենք նման պարագաներում: Օրինակ՝ Սիրիայի եւ Իսրայելի միջեւ հաշտեցման գործում հաջողության հասնելու համար մենք ահագին ջանքեր ենք թափել, եւ երբ թվում էր, թե հարցը լուծման ընթացքի մեջ է արդեն, Գազայի դեպքերը պատահեցին եւ ամեն ինչ վերադարձավ ելման կետ: Միայն սահմանը բացելով ոչինչ չի փոխվում: Մի ողջ շարք կա հարցերի, որոնք պետք է համալիր լուծման ընթացքի մեջ դրվեն: Իսկ եթե Հայաստան-Ադրբեջան սահմանի վրա, ուր գրեթե ամեն օր կրակոցներ կան, որեւէ բան պատահի՞, փակելու ենք սահմանը նորի՞ց: Այդ պարագայում հարաբերությունների հաստատման եւ կոնֆլիկտների լուծման բոլոր հեռանկարները կտապալվեն տեւական ժամանակով:

Մենք չենք կարող մեզ թույլ տալ հանուն Հայաստանի հետ հարաբերությունների կորցնել Ադրբեջանը: Մենք խնդրեցինք նախագահ Սարգսյանին, ես քանիցս առաջարկեցի իմ գործընկեր Նալբանդյանին, որպես Ադրբեջանի համար դեմքը փրկելու (Դավութօղլուն օգտագործեց face saving արտահայտությունը-Հ. Ա.) ժեստ. գրավյալ շրջաններից (նրանք այդպես են կոչում այդ տարածքները՝ region) մեկը կամ երկուսը, օրինակ՝ Ֆիզուլին եւ կամ Աղդամը վերադարձնել, որի պարագայում Բաքուն պատրաստ կլիներ նույնպես բացելու իր սահմանը: Հայաստանը մերժեց:

Վերջում Թուրքիայի արտգործնախարարը տեղեկացրեց Փարիզում հայազգի դեսպան նշանակելու մասին, որին արդեն ծանոթ է մեր ընթերցողը: Ինչ վերաբերում է նրա որոշ արտահայտություններին, դրանց անդրադառնալու առիթ կլինի հետագայում:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Արմավիրի մարզի Ջարթոնի համայնքի վարչական տարածքում «Հայկական ատոմային էլեկտրակայան»-ի՝ խմելու-կենցաղային նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 0,5 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության սացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. ապրիլի 4-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ բնապահպանության նախարարություն

Երեւանի Ապրանքա-Հումքային Բորսայի հարթակում իրականացվում է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ ԱՀԿ-ների (ATC) ու ԳՄԿ (ЛКС) եւ դրանց բաղկացուցիչ մասերի, սարքավորումների, միկրոսխեմաների, ռելեների, դիոդների, լամպերի, տրանզիստորների, դիմադրությունների, կանգնակների եւ ապրանքանյութական այլ բազմանուն արժեքների աճուրդային վաճառք:

Աճուրդները իրականացվում են յուրաքանչյուր աշխ. օր ժ.11.00 – 17.00-ն, ք. Երեւան Ագաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցեում: Աճուրդներին մասնակցելու կարգին, ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 565228 կամ այցելել **www.borsa.am**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, հայտարարում է պարզեցված ընթացակարգ՝ ՀՀ ԱՎԾ-ՊԸԱՊՁԲ-2011/1 ծածկագրով: Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ ԱՎԾ կարիքների համար «Լիցքավորման քարտերի» ձեռքբերումը: Հրավերը թղթային տարբերակով ստանալու համար անհրաժեշտ է 500 ՀՀ դրամ փոխանցել «HSBC բանկ-Հայաստան» ՓԲԸ, «Լուսաբաց-Հրատարակչատուն» ՍՊԸ-ի 217001147701001 հաշվեհամարին և սույն հայտարարության գնումների տեղեկագրում հրապարակելու օրվանից հաշված 8 օրացուցային օրերի ընթացքում դիմել Պատվիրատուին հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Կառավարական տուն 3, 613 սենյակ, հեռ.՝ 522251, Ռ. Մարտիրոսյանին: Հրավերը անձին տրամադրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաև անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա:Հայտերը պետք է ներկայացնել մինչև դրանց բացման պահը՝ սույն հայտարարության գնումների տեղեկագրում հրապարակման օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 15:00-ն:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 28.3.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: